№ 1 (229) XXIII ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1913

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

„ԱՄԵՆԱԶԱՐՀՈՒՐԵԼԻՆ"

Պատերազմի վերջանալուց, բալկանեան հաշտեւարդարը կատարուելուց յետոյ՝ հրապարակ կը գայ մի այլ խնդիր, ամենամեծը, ամենազարհուրելին, — ասիական Թիւրքիոյ խնդիրը։ Այսպէս է յայտարարում „L'Italia all'Estero" իտալական հանդէսը իր վերջին համարի մէջ, արտատպելով մեր բարեկամ Վիկտոր Բերարի մի յօդուածը „Pour les Peuples d'Orient" պարիզեան հայասէրների օրգանից։

Այդպէս են յայտարարում երեք ամսից ի վեր նոյն պարիզեան օրգանի մեծանուն տնօրէնները, Պրեսսանսէ և Վիկտոր Բերար, փաստելով ու պատճառաբանելով հայոց ռէֆորմների ստիպողական անհրաժեշտութիւնը։

Նոյն յայտարարութիւնները կարդում ենք յաճախ և եւրոպական մամուլի այլ ձեռնհաս օրգաններում։ Ադրիանուպօլսի և կղզիների հաւանական կորուստը, բուլգարների և յոյների յաղթական առաջխաղացումը դէպի Բոսֆորի ու Փոքր Ասիոյ եզերքները աւելի ևս ոյժ են տալիս այդ յոռետես գուշակութիւններին։

Զուր, անհոգ կռահումներ չեն։ Զուր, անհիմն ցնորք չէ և Պրէսսանսէի այն կատէգորիկ պնդումը՝ թէ Հայաստանը, կամ արակապն է լուրջ ու կայուն խաղաղութեան... Եւ միանգամայն հասկանալի է անգլիացի դիւանագէտի սրամիտ յայտարարութիւնը ի պատասխան մի հարցապնդումի. „դիւանագիտական սեղանը այժմ սաստիկ ծանրաբեռնուած է և ձա անպատճառ կը խորտակուի, եթէ աւելացնենք հարցից հարցը"...

Թիւրքական Ասիան հիւանդ մարդու օրգանիզմի ամենահիւանդ մասն է, ուր ցեղերի հակամարտութիւնը մի առանձին ողբերգական դրշմ է կրել մինչև օրս, կրելու է և այսուհետև, ուր մասաւոր, տնտեսական, կուլտուրական ներհակութիւնները հասնում են մի չտեսնուած ծաւալի։ Եւ Հայաստանը — այդ աւերիչ ներհակութիւնների ամենածանօթ թատերաբեմը... Ոչ մի հնարք չի կարող տեւականօրէն ապահովել խաղաղութիւնը այդ արիւնոտ վայրերում, եթէ այնտեղ շարունակէ թագաւորել Թիւրք-քրդական կրկնակի և անորակելի լուծը։ Ոչ մի հնարք—բացի իրական և հիմնական ռէֆորմներից։ „Ցանին", երիտասարդ Թիւրքերի օրգանը, շեշտում է այդ—քանի՞երրորդ անգամը արդեօք—իր վերջին համարներից մէկում։

Նա ևս, Պրեսսանսէների ու Բերարների հետ, պընդում է, որ վաղը անհրաժեշտաբար հանդէս կը գայ և հայկական հարց և որ պէտք է աճապարել՝ կանխելու նոր ցնցումներն ու աղէտները լուրջ ու խորունկ բարենորոգումներով։ Եւ Ահմէդ Ռիզան այնքան է ազդուած իր գաղափարակից օրգանի այդ կորովի յայտարարութիւնից, որ հարկ է տեսնում հրաւիրելու մեր ուշադրութիւնը „Ցանին"ի այդ յօդուածի վրայ, հաւատացնելով, որ Բ. Դուռը այսուհետև անդառնալիօրէն յարած է ռէֆորմային քաղաքականութեան... Տարաբախտաբար, „Ցանին"ների և Ռիզաների չորսամեայ կառավարական մեթոդները և մանաւանդ նրանց յատուկ տեսակէտները հայկական հարցի նկատմամբ՝ տեղ չեն թողնում ոչ հաւատի, ոչ յոյսի համար։

Խաբէական հնարքների ժամանակը անցել է, սակայն, նրանց ֆատալ, ճակատագրական հետևանքը պարզուած է այսօր իր ահեղ ու արիւնաներկ պատկերով երիտասարդ Թիւրքերի առջև, և բէցիդիվը, մօտիկ անցեալի ոճիրների կրկնութիւնը պիտի տանէ անխուսափելիօրէն դէպի ամենամեծ, „ամենազարհուրելի" կատաստրոֆը... Թիւրքիան, կորցնելուց յետոյ իր աֆրիկեան և եւրոպական ղանդամասալ հողերը, պիտի խոցւի և իր նախնական ու ամրակուռ միջնաբերդում—Ասիայի մէջ։

Ո՞ւր է փրկութեան խարիսխը... Ո՞րն է դիւանագիտական այն հնարքը, պետութիւնների այն համախմբումը, որին այսուհետև կարող են փարիլ Օսմանի ստրկացած ժառանգները՝ իրենց այդ վերջին միջնաբերդը փրկելու համար։ Մի ժամանակ Անգլիան էր երդուեալ պաշտպանը Թիւրք կայսրութեան ամբողջութեան։ Վերջերս Գերմանիան էր ստանձնել այդ շահաւետ ու նախանձելի դերը։ Նա էլ, սակայն չ'օգնեց... և հէնց նրա դաշնակից Իտալիան էր, որ Տրիպոլիսեան իր պատերազմով բաց արեց Դուռը ահաւոր բարդութիւնների, շղթայազերծեց ներկայ բալկանեան փոթորիկը և կործանեց Վիլհէլմ II-ի հովանաւորեալին... Այդպէս է գործում Նէմէզիդան բռնաւոր և արատաւոր պետութիւնների դէմ, որոնք ամեն գնով խեղդել են ուզում ժողովուրդների ազատ զարգացումը...

Գերմանիան մի տասնեակ տարուց ի վեր արտակարգ աճապարանքով ձգտում էր վերակազմել Թիւրքիոյ տարրալուծուող մարմինը, շունչ ու ոգի հաղորդել նրան, ուժեղացնել տնտեսապէս, ստեղծել զինուորական պատկառելի մի ուժ՝ ապագայում բրիտանական ոսոխի դէմ գործադրելու նպատակով *).. Դէպքերը եկան հապշտապ, անակնկալ յաջորդութեամբ, խորտակեցին այդ վարդագոյն երազները։

Գերմանիան այսօր ևս շարունակում է անոյշ բառեր փսփսալ հոգեվարքում հիւանդի ականջին, հասկացնում է բարձրաձայն, որ թոյլ չի տայ բռնանալ ասիական Թիւրքիոյ ամբողջութեան վրայ, սպառնում է Նոյնիսկ Ռուսաստանին, ցուցադրում է եռանդով իր կենսական շահերը Անատոլուի մէջ։ Սակայն կարո՞ղ է նա — ըստ աւանդական սովորութեան — շարունակել արգելք լինել հայոց ռէֆորմների իրագործման... Թուում է թէ ոչ։ Նշանները երևում են արդէն. Գերմանիան ստիպուած է շահագրգռիլ ոչ միայն Կիլիկիոյ, այլ ամբողջ Հայաստանի կացութեամբ. նա ստիպուած է — իր կենսական շահերի դրդումով իսկ — նպաստելու այդ երկրի բարեկարգման ու իրական խաղաղացման..

Ի զուր, ուրեմն, երիտասարդ-Թիւրքական անբուժելի կարճամտութիւնը վերստին կ'ապաւինէ Ցեվտօնեան հովանիին, փնտրելով նրա մէջ իր յանցանքների նիրագործումը, օսմանեան ամբողջութեան *sans condition* պաշտպանումը.. Հայ ժողովուրդը կ'աշխատէ իր բոլոր արամադրելի միջոցներով այդ շինծու և ոճրագործ խաղաղութեան դէմ։ Հայ ժողովուրդը կը հոգայ, որպէս զի „ասիական Թիւրքիոյ ամբողջութեան“ նոր դօգմին չզոհաբերեն իր դատը։ „Եթէ Եւրոպան — վերջացնենք Վիկտոր Բերարի հրահանգիչ խօսքերով — եթէ նա կամենում է կանգուն պահել ասիական Տաճկաստանը, պէտք է այժմից իսկ ձեռնարկէ նրա փրկութեան. իսկ այդ փրկութեան առաջին գործիքն է՝ հայկական ռէֆորմը“...

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅԵՂԵՐԻ ԲԱՂԽՈՒՄ

Քաղաքական կեանքի ալիքը շարունակում է իր ընթացքը զգայացուցիչ ելևէջներով։ Ամեն օր մի նոր անակնկալ։ Յոռետեսութիւնն ու լաւատեսութիւնը յաջորդում են անվերջօրէն կամ թէ հիւսւում մի տարտամ, անորոշ կացութեան մէջ, ուր դիւային հանձարն անգամ անկարող է ճանապարհ գտնել, մօտաւորապէս գուշակել գալոց անցքերը։ Այսօր մամուլը ողջունում է ցնծութեամբ արևելեան պատերազմի մօտալուտ վախճանը, բայց և միւս կողմից ազդարարում... համաեւրոպական պատերազմի հաւանոր հնարաւորութիւններ։ Ոմանք շարունակում են անայլայլ լաւատեսութեամբ փաստել, ապացուցանել, որ այդ յոռետես գուշակութիւնները ցնորք են, որ ընդհանուր պատերազմը անհնարին է, զուրկ բանաւոր պատճառներից, որ Եւրոպան չի նետի ինքզինքը մի վիթխարի սպանդանոցի մէջ՝ ինչ որ ալքան սահմանների, կամ բալկանեան որևէ փոքրիկ վէճի համար։

Իրօք, սակայն, այդպէս չէ պատկերանում կացութիւնը — և յոռետես աղաղակները գէթ նոյնքան արդարացի են, որքան լաւատես հաւաստիացումները։ Ահա Գերմանիան վերստին զարկ է տալիս միլիտարիզմի հոսանքին. հապշտապ պատրաստում է զինաւորման նոր ծրագիրներ և բորբոքում նոյն տենդը հարևան երկրների, մասնաւորապէս Ֆրանսիայի մէջ։ Ահա ցարի մի արտառոց, խիստ „զգացուած“ գրութիւնը նախագահ Պուանկարէին, ուր մի առանձին քնքշութեամբ, գրեթէ չտեսնուած ուժով շեշտւում է ռուս-ֆրանսիական դաշնակցութիւնը։ Ահա Դելկասսէն — ֆրանսիական դեսպան Պետերբուրգում... այն Դելկասսէն, որի մէջ տեսնում են անձնաւորումը ֆրանսիական անհաշտ, յարձակողական հայրենասիրութեան, որ ձգտում էր տարիներ առաջ, Ռուսաստանի ու Անգլիայի աջակցութեամբ, մեկուսացնել Գերմանիային և մահացու հարուած տալ նրան։ Ահա, վերջապէս, մի տենդային արշաւանք Ֆրանսիայի մէջ՝ ի նպաստ եռամեայ զինուորական ծառայութեան *), մի արշաւանք՝ որ սատարուած է ըստ երևոյթին կառավարութեան կողմից և որ կարող է պակուել աջողութեամբ..

Ի՞նչ է պատահել։ Փորձենք երկու խօսքով բնորոշելու կացութիւնը, յուսալով յետագայում աւելի հանգամանօրէն կանգ առնելու նրա բարդ հանգոյցների վրայ։

Արդարև, չափազանց բարդ են այդ հանգոյցները։ Եւրոպան ապրում է իր պատմութեան ամենախորհրդ-

*) Ցեղ տարուց ի վեր սոցիալիստ ու ռամկավարական տարրերի շնորհիւ, հաստատուած է Շ-ամեայ զինուորական ծառայութիւն, իբրև աւելի համապատասխան ժողովրդավար հանրապետութեան ոգուն։ Ոմանք առաջարկում էին իջեցնել մէկ տարուան։ Իսկ սոցիալիստ կուսակցութիւնը, որ 75 անդամ ունի պարլամենտի մէջ, ինչպէս յայտնի է, իր միջազգային ծրագրի համեմատ, պահանջում է խպառ վերացնել կանգուն զօրքը և հաստատել միլիս, համաժողովրդական բանակ, նման շվեյցարականին, որ լաւագոյնն է հայրենիքի ինքնապաշտպանութեան համար և որի նախնական կազմակերպութիւնը ցոյց է տուել իր գերազանց ոյժը Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան մղած պատերազմների մէջ։ Սակայն, Ֆրանսիայի շովէնները չեն ուզում բաւականանալ ինքնապաշտպանութեամբ, նրանց ջերմ տենչանքն է՝ *revanche* անել, հարուած տալ Գերմանիային և յետ խլել Ալզաս-Լորրէնը...

*) Տ. „Դրօշակ“ի յօդուածաշարքը՝ „Գերմանական արշաւը և Թիւրքիոյ ճակատագիրը“։

դաւոր և ահաւոր դրուագներից մինը։ Խնդիրը, հարկաւ, մի սերբիական նաւահանգստի, մի ալբանական սահմանագծի, մի թիզաչափ հողի մէջ չէ, որի առթիւ պետութիւնները պիտի ընդհարուին։ Պատճառները աւելի խորն են, շահերը՝ աւելի խոշոր, մրցումները՝ աւելի ծաւալուն։

Արևելեան յաւիտենական կնճիռը, բալկանեան պատերազմով, նոր շրջան է բաց անում Եւրոպայի քաղաքական էւոլիւսիոնի մէջ։ Կացութիւնը հիմնուած էր մինչև օրս ցամաքային երկու մեծ զինակցութիւնների՝ երկպետեանի ու երեքպետեանի՝ գոյութեան ու յարաբերութեան վրայ։ Մի քանի տարուց ի վեր՝ առաջինին (ռուս-ֆրանսիական զինակցութեանը) միացել է մի նոր ուժեղ ու բարեկամ պետութիւն—Անգլիան և այդպիսով, երեքպետեան (գերման-աւստրօ-իտալական) դաշնակցութեան դէմ իրաւ ցցել է երեք-պետեան համաձայնութիւնը (ռուս-ֆրանս-անգլիական, triple entente)։ Երկու հակամարտ գործօնների փոխյարաբերութեան վրայ և հաստատուած էր այսպէս կոչուած „Եւրոպական հաւասարակշիռը“։

Այժմ այդ հաւասարակշիռը խախտելու վրայ է։ Մի նոր ոյժ երևան եկաւ արևելեան Եւրոպայում—բալկանեան դաշնակցութիւնը։ Ձենք կանգ առնում պատճառների վրայ... Այստեղ ևս հիմնականը այդ պատճառներից օսմանեան ախտաւոր ռէժիմն էր, որ ստեղծելով անհանդուրժելի մի կացութիւն Մակեդոնիայում ու Կրէտէում՝ ի վերջոյ միացրեց երկու դաբաւոր քրիստոնեայ հակառնեաները — յոյնն ու բուլգարը...

Բալկանեան այդ նոր, սլավ-ուղղափառ դաշնակցութիւնը, որ իր 700,000 պատկառելի բանակով կազմում է մի նոր մեծ պետութիւն և որ փայլուն յաղթանակների շարանով ապացուցեց արդէն իր կորովի կենսունակութիւնը, բնականաբար, հակուած է իր գործօն համակրութիւններով դէպի ցեղակից և կրօնակից Ռուսաստանը,—և ահա այդ հանգամանքն իսկ խախտում է արդէն եւրոպական հաւասարակշիռը, ուժեղացնելով երեքպետեան համաձայնութիւնը՝ ի վնաս երեքպետեան զինակցութեան։

Կան ուրիշ „խախտող“ պատճառներ ևս։ Կայ այն՝ որ սերբերի քաղաքակը, սերբ պետութեան յանկարծակի ծաւալումն ու ուժեղացումը ստեղծում է նոր կացութիւն Աւստրօ-Հունգարիայի մէջ, յեղաշրջում է սլավ ու գերման ցեղերի յարաբերութիւնները, մի անսովոր թափ է հաղորդում հայրենասիրական խանդավառութեանը այն միլիոնաւոր սերբերի՝ որոնք ապրում են աւստրօ-մաջառ պետութեան սահմաններում, Դալմատիայի, Խորվատիայի և մանաւանդ Բօսնիա-Հերցեգովինայի մէջ—և, ճնշած օտար ռէժիմի տակ, վաղուց ձգտում են միանալու իրենց ցեղակից Սերբիային... Աւստրիական վերջին զօրաշարժը ուղղուած է գլխաւորապէս սեփական սլավ հպատակների դէմ, ոտքի էին հանում հարիւր հազարաւոր զինուորներ՝ ճնշելու համար... Բօսնիա-Հերցեգովինայի ապստամբութիւնը, որ կարող էր պայթել, իբրև հետևանք սերբիական փառաւոր յաղթանակների...

Հաբսբուրգեան միապետութիւնը չի մոռացել, ի հարկէ, անցեալի սխալ փորձերը։ Մի ժամանակ նա խեղդել էր իր բռնաւոր ճիրաններում ժամանակակից Իտալիայի մի մասը—Լոմբարդիա, Վենետիկ—բայց այդ հզօր բռնապետութեան դէմ առաջ եկաւ մի Պիէմոնտ, իտալական փոքրիկ ու անկախ մի պետութիւն, որ իր շուրջը համախմբելով հայրենիքի նաւաճած բեկորները, պարզեց յաղթականօրէն ապստամբութեան դրօշը։ Այսօր սերբիական փոքրիկ պետութիւնը կարող է դառնալ մի նոր Պիէմոնտ, մի նոր կորիզ, որի շուրջը կարող են հետզհետէ համախմբուիլ սերբութեան ցիրուցան հաւաածները և ահաւոր պատերազմ հրատարակել Աւստրիոյ դէմ։

Ահա թէ որտեղ է մեծ վտանգը Վիեննայի կառավարութեան համար։ Ոչ այդ դեռ բոլորը չէ։ Կայ նաև „ռումանական վտանգը“։ Երեք ու կէս միլիոն ռումէնները Տրանսիլվանիայի և Բուկովինի մէջ նոյնքան ճընշուած ու հարստահարուած են, որքան և Բօսնիայի սերբերը։ Նրանք էլ, անշուշտ, ձգտում են դէպի իրենց հարազատ Պիէմոնտը—Ռումանիան։ Վերջինս, թէև պաշտօնապէս փարած է երեքպետեան համաստեղութեան, բայց նոյնպէս, անտարակոյս, ունի revanche-ի իր ժամանակը և չպիտի վարանի հարուածելու, երբ կը հասնի բարեյաջող վայրկեանը։

Մի մի աղբիւրներ ժամանջութեան... Սալոնիկը ձեռքից ընկած, Drang nach Osten-ի ճանապարհը փակուած, պանսերբիզմի (համասերբութեան) ուրուականը առջևը ցցուած և խոր, անդարմանելի պառակտումը ներսում... Աւստրիան այդպիսով մի ծանր տագնապ է ապրում։ Թիւրքական հաշուեյարդարը կատարուելուց յետոյ՝ բացւում է այժմ „աւստրիական խնդիրը“։ Արևելեան մեծ հիւանդի հաշիւները մաքրուելուց յետոյ՝ այժմ Աւստրիան է, որ նեռւում է „հիւանդ մարդու“ կացութեան մէջ...

Այդտեղ է ժամանակակից իրարանցումի և ռազմական պատրաստութիւնների բուն, հիմնական պատճառը։

Անսովոր է այդ իրարանցումը դաշնակից Գերմանիայում։ Հնչում է արդէն ահազանգը, որոտում են կայսերական ճառերը,—գոռոզ, ռազմաշունչ, բայց և միշտ մտահոգ—մամուլը հարիւրաւոր ձևերով հոլովում է սլավոնական-ֆրանսիական-բրիտանական վտանգը և պետութիւնը շարունակում է աճեցնել իր ռազմական ուժերը։ Միլիտարիզմի ամենաահեղ մեքենան, զինուորական ամենահզօր պետութիւնը, որ մինչև օրս ամեն առթիւ և մի տեսակ գրգռիչ յաւակնութեամբ զգալ էր տալիս ամբողջ Եւրոպային իր ճնշող

գերազանցութիւնը, — այսօր նա, անցքերի գահավէժ ընթացքից շանթահարուած, երկիւղով նայում է իր շուրջը և զարկում է ահակոչնակը սպառնացող վտանգների դէմ... Վիլհելմ II-ի գլխաւոր յոյսը Աւստրիան էր (Իտալիան միշտ խորթ է զգացել ինքզինքը երեքպետեան դաշնակցութեան մէջ) և ահա միակ յուսալի դաշնակիցը պառակտուած, ներքուստ գրեթէ անդամալուծուած։ Ֆրանսիան՝ թշնամի, Ռուսաստանը՝ թշնամի, Անգլիան՝ թշնամի, սլաւոն հպատակների և բալկանեան պետութիւնների մեծ մասը՝ թշնամի... Այդպիսով, գերագոյն վտանգի ժամին՝ Գերմանիան կարող է տեսնել ինքզինքը պաշարուած մի շարք ահարկու ոսոխներով, որոնց ընդարձակ թատերավայրում մեծագոյն տեղը պիտի բռնեն սլաւոնականութեան վիթխարի զանգուածները... Եղերական բաղխումը կարող է յետաձգուել անորոշ ժամանակով, բայց թւում է թէ նա անխուսափելի է...

Պանգերմանիզմ և պանսլաւիզմ (հայոգերման և հայասլաւոն միութիւններ) ծառանում են դէմ յանդիման, իւրաքանչիւրը նախիշխանութեան, հեգեմոնիայի իր տարտարոս նշանաբաններով, իւրաքանչիւրը ասես ձգտելով դուրս գալու իր աբստրակտ, վերացական էութիւնից և դառնալու որոշ, կոնկրետ և ծաւալուն մի հոսանք։ Ո՞ւր է մղում հայաշխարհային էւոլիւսիոնի ալիքը...

Մ. Վ.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՀԱՃԻ ԱՐԱՄ ԲԱՂԷՃՑԻ

—

Հաճի Արամ Գասապեան բնիկ բաղէշցի է. ծնած է 1875 մայիս 12-ին։ Ունէր խիզախ ոգի և հաստատ նկարագիր։ Դեռ դպրոցական աշակերտ էր, իր մէջ կըսկսի յեղափոխական ոգին արծարծուիլ։ Կը բաղալերի Սերոբի սիրելի զինուորներէն Սիմոնէն, 18 տարեկանին կը կազմէ մի փոքրիկ խումբ և կաշխատին Մշոյ դաշտի մէջ կազմուած միութեան հետ յարաբերութեան մտնել։ Այդ թուականներին կը կախի Մարգար վարժապետը, որով աւելի ևս յիշեալի մէջ կը հրահրուի վրէժխնդրական ոգին։ Նոյն թուականէն տարի մը վերջ, Սերոբ Աղբիւրը իր խումբով երկիր կը մտնէ. Սոխորդ գիւղը կուռոյ կը բռնուի։ Հաճի Արամ Բաղէշ լսելուն՝ քանի մը ընկերներով օգնութեան կը հասնին, բայց մինչև Սաւայ ըսուած տեղ դեռ չհասած՝ Սերոբը արդէն կուէն ազատելով իրենց կը հանդիպի. միասին առնելով ու Բաղէշ Հաճի Արամի տուն բերելով, ամբողջ 15 օր գաղտնի կը պահէ։ Այդ ժամանակ Սերոբ դրամական օգնութեան խիստ պէտք ունենալուն՝ կ'որոշէ հանգանակութիւն կատարել։ Այդ գործն ալ այն ժամանակ շատ հեշտ բան չէր։ Հաճի Արամը յանձն կ'առնէ Սերոբի հետ քաղաք պտտիլ առանց խորութեան թէ բարեկամի թէ անծանօթ հարուստներին դիմելով պէտք եղածի չափ դրամ հաւաքեն։ Արամը կը տանէ Պոյնիսկ Սերոբի գրագրութիւնը շատ անգամներ։ Մինչ այդ ժամանակ ազատ հաստատակ քաղաքի մէջ կը պտտէր, երբ իր գրած նամակներէն մին սուրհանդակի միջոցաւ կը բռնուի։ Կառավարութիւնը կըսկսի հետապնդել, բայց իր աչալրջութեան շնորհիւ կազատուի։

Անկէ վերջ կըսկսի փախստական կեանքը։ Մէկ ամբողջ տարի Սերոբի հետ կը պտտի և քանի մը կռիւներու բռնուելով, քաջաբար կը կռուի։ Տարիէ մը վերջ, Սերոբի խորհուրդով և յանձնարարականով կ'անցնի Կովկաս։ Կովկաս անցած ժամանակ Դուստաղի քով վարդապետի մը ձեռքով կը մտնուի։ Հոն բաւական կուելէ վերջ, ազատուելով կ'անցնի կերթայ Կարս։ Ապա Թիֆլիս կերթայ և 3 տարի հոն կը գործէ։ Եթէ կը լսէ իր սիրելի ընկեր Սիմոնի մահը. կ'որոշէ անպայման երկիր վերադառնալ և գործը շարունակել։ Կուգայ մինչև Իգդիր և կաշխատի խումբ կազմել՝ երկիր մտնելու։ Տարի մը կենալէն վերջ՝ Երևան կերթայ ապա մի ընկերոջ հետ կ'անցնին Դարալագեազի և Բամբակաձորի շրջանը։ Նորէն դէպի Երևան և դէպի Իգդիր։ Հոս իրեն ընկեր ունենալով բղեցի Պողոսն (Պիծան), իր անձնական դրամով կաշխատի նոր գիծ բանալ դէպի Վան։ Այդ միջոցին հոն կուգան նաև սպահիրդցի Զուրոյի Մանուկն և լմեցի Պետրոսն, որոնք ուժ կուտան գործին։ Երեք տարի աշխատելէն վերջ, Իգդիրի գաւառապետ Բօգուսլաւսկու արգելքներին կը հանդիպի. վերջապէս կը յաջողին Զօռի, Միրզաջանի և Արճէշի վրայով մի գիծ բանալ



Հաճի Արամ Բաղէճցի

Այս ժամանակներ, Բօգուսլավսկու քրդասէր բնութիւնէն բաղալերուած՝ քիւրդեր դէպի Ցաճկաստան զէնք կը փոխադրեն։ Հաճի Արամ իր ընկերներով կ'որոշեն ամեն գնով արգիլել։ Շատ անգամներ քիւրդերի հետ դէպքի բռնելով կառնեն նրանց զէնքերն։ Քիւրդերն Հաճի Արամին, իր արագաշարժութեան համար, Հաճիէ ՓԸԼՓԸԼ կը կանչէին։ Իսկ իգդիրցիք և շրջակայ գիւղացիք՝ Հաճի։ „Դաշնակցութեան" որոշմամբ 2—3 քիւրդեր տերրօրի կ'ենթարկուին. Արամը յանձնառու կ'ըլլայ և յաջողութեամբ գլուխ կը հանէ։ Ռուս կառավարութիւնէն կը բռնուի ու կը բանտարկուի ամբողջ 16 ամիս. շատ նիւթական զոհողութիւններէն վերջ՝ Սիպիր գնալէն և բանտէն կ'ազատուի։ Պօղոսի հետ կ'որոշեն Բաղէշ գնալ և հոն գործի սկսիլ։ Կ'անցնի Բաղէշ, ուր բռնելով կը բանտարկեն, բայց դրամական զոհողութեամբ $1^1/_2$ տարի բանտարկուելէն վերջ. կազատուի։ Ճիշտ նոյն ժամանակին Պօղոս կ'անցնի Սասուն, անկէ Բաղէշ։ Հաճի Արամ և Պօղոսը կը սկսին կազմակերպութեան և միևնոյն ժամանակ Սասնոյ օգնելու նպատակաւ հանգանակութիւն կ'ընեն Բաղէշ և կը յաջողին։ Պօղոս կերթայ Արճէշ՝ փոխադրութեանց վրայ հոկելու. ճանապարհին կը սպաննուի։

Հաճի Արամը կը գործէ Արճէշի մէջ „Ս'անուշ" կեղծ անունով։ Վերջին տարիներ, այսինքն սահմանադրութեան ատեն, կը սկսի իր հօր հետ ոչխարավաճառութիւն ընել. քանի անգամ Վանայ կողմերէն ոչխար առնելով իր ծերացած հօր հետ Հալէպ կերթայ։ Այս անգամ ոչխարով միասին երբ կրկին Հալէպ կերթար, քաղաքէն 8 ժամ հեռաւորութեան վրայ ձին կը վազցնէ. սրտի երակներէն մին կը պայթի և մահն վայրկենական կըլլայ (1912 թ. հոկտ. 1-ին)։ Մարմինը Բաղէշ բերին. ամբողջ ժողովուրդը ողբաց անձնուէր գործիչը։

ՆԱԶԱՐ ԱԼԱՄԾԱՐԵԱՆ

(1870—1905)

Մշեցի էր Նազարը։ Թաղի վարժարանը աւարտելէն ետքը մտաւ աշխատանքի, օրապահիկը հանելու և ընտանիքին օգնելու համար։

Կը սիրէր որսորդութիւնը և լաւ նշան կը զարնէր։ Առաքինութիւններ, որոնք կը փառաբանէր ժամանակը և յեղափոխական հովերով տարուած երիտասարդութիւնը։

Նազար կանուխէն մտած էր յեղափոխական շարքին մէջ։ Իր պարզ խելքով հասկցած էր, որ հասարակական շահը պէտք էր գերադասել անհատականէն և մեռնել հայրենիքի գաղափարին ու սեփական ժողովրդի բարօրութեան համար, եթէ պէտք էր։

Այս ազնիւ մտածումով տարուած՝ Նազար չկրցաւ համբերել, երբ ծագեցան Սասնոյ դէպքերը 1904-ին։

Տուն և ընտանիք թողնելով, գիշեր մը նա, ուրիշ կամաւոր ընկերներու հետ բարձրացաւ լեռ և միացաւ Անդրանիկի խումբին, որ պարզեր էր ըմբոստութեան դրօշը Սասնոյ բարձունքներուն վրայ։

Մշոյ և Դաշտի երիտասարդութիւնը շարժման, եռ ու զեռի մէջ էր։ Հեռանկարը գրաւիչ էր — բարեհոռոգուած կամ ինքնավար Հայաստանի յոյսերը թռիչքներ կուտային անոր։ Իսկ դէպքերը ոգևորիչ էին — „ռայան" կը ծառանար զինեալ ոյժով իր տէրերուն դէմ և ստրկութեան մուրը կը սրբէր իր ճակտէն։

„Գիւաւուր զան կէօրաի" (հայը արիւն տեսաւ) արհամարական ձևով չէր, որ կը դիմաւորէին բարեկամները ու թշնամիները, այլ միաբերան կը գովէին հայերու յանդգնութիւնն ու քաջութիւնը, կազմակերպական յատկութիւններն ու կորովը։ Արհամարհանքը փոխուած էր յարգանքի։

Նազար Ալամծարեան

Թուով քիչ էին յեղափոխականները. Սասունը պաշարուած էր 40,000 զօրքով. բայց ի՜նչ փոյթ, մեծ էր գաղափարի ոյժը և զօրաւոր քան 40,000 սուիններ։

Այս մեծ գաղափարի համեստ, յանդուգն ու անձնուէր կրողներէն մէկը մնաց Նազար, կռիւներու սկիզբէն մինչև վերջը, մինչև իր հերոսական մահը։

Մօտ ամիս մը մասնակցեցաւ Սասունի կռիւներուն։ Անգամ մը թշնամիներէն 8 հոգի սպաննելով բերաւ անոնց զէնքերը։ Բայց ինքն ալ ուսէն վիրաւորուելով իջաւ Մուշ։ Առողջանալէն յետոյ կրկին միացաւ Անդրանիկին, ու մասնակցեցաւ Գոմերի, Կուրաւի, Շամիրամի, Աղթամարի կռիւներուն։ Յետոյ խումբին հետ Վանի վրայով անցաւ Պարսկաստան, ուր ձմեռը մնաց տեղական հայդուկներու խմբին մէջ։

Բայց Նազար չէր կրնար գործէն ու երկրէն բաժնուիլ, անկէ հեռու մնալ։

1905-ի գարնան սկիզբը Հ. Յ. Դաշնակցութիւնը կը զինէր Փոխանի ձիաւոր խումբը Վասպուրական անցնելու համար։ Նազար միացաւ խմբին։

Պարսկա-Թիւրք սահմանի, կոթուրի, լեռներուն վրայ խումբը կուի բռնուեցաւ քիւրդերու հետ։ Անհաւասար կռիւ։ 18 կարիճներու դէմ եկան հաւարը լսող շրջակայ բոլոր աշիրէթները բազմաթիւ կուշղներով։

Կռիւը եղաւ ահաւոր։ Ցղերբը կուեցան առիւծներու նման ու... ինկան։

Քիւրդերը իրենց երգերուն ու պատմութիւններուն մէջ անմահացուցին Փոխանի ու իր խմբին քաջութիւնը։

Այսպէս և այստեղ, հեռու Յարօնէն, ինկաւ Նազար նահատակ...

Յարգանք անյայտ շիրմին։

ՄԱՐԶՊԵՏ

ԱՆՅԵԱԼԻ ԱՐՇԻՎՆԵՐՈՒՄ

ՄԱԼԱԹԻԱՅԻ ԱՂԷՏԸ

(1895 թ.)

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

Դէպքէն երեք ամիս առաջ, կառավարութիւնը գաղտնի կերպով կը հրահանգէ թիւրք ժողովուրդը և անոնց զէնք կը յուէ, շրջականներէն մինչև 20 ժամ հեռաւորութենէ թիւրք երևելիներ կը բերուին։ Հոկտեմբերի մէջ. Մալաթիայէն գործի համար շրջակայ գիւղերը գացող քանի մը հայեր կըսպաննուին և կառավարութիւնը ըստ ամենայնի անփոյթ կը մնայ։ Ժողովուրդը կառավարութեան և տաճիկ հասարակութեան բռնած ընթացքէն որոշ տեսնելով թէ Նպատակին գէշ է, քանի մը օր վախերնուն խանութին կը գոցեն, և դէպքէն հինգ օր առաջ առաջնորդ. փոխանորդ հայրը, կաթոլիկներու վարդապետը և բողոքականայ երեցը կը դիմեն Ալի-Ռիզա փաշային, խնդրելու՝ որ այս բաներուն առջևը առնուի. Ալի-Ռիզա փաշան կը վստահացնէ զանոնք թէ „քանի որ ես կապրիմ, քրիստոնեայի մը մէկ մազը անգամ չի կորսուիր“. այս կարգի սուտ խօսքերով կը համոզէ, որ երիտասարդները բանալ տան և ապահով ըլլան։

Հոկտ. 23 ժամ 4 1 2-ին 15-ի չափ թիւրք սրիկաներ կը յարձակին շուկային մօտ Համիկ-ուղլու խանի վրայ և հոն գտնուած քանի մը պանդուխտները կը զարնեն, ասկէ կը յարձակին Արլիճանեան սափրիչ Սարգիսի խանութին վրայ, ուր կը մեռցնեն հինգ հայ և քիւրդ մը (այս վերջինը կաժիլի եղեր), երբ մեռած քիւրդը կը տեսնեն, կըսկսին պոռալ ու կանչըռտել, թէ „հայ սափրիչ մը ածիլելու ատեն քիւրդին վիզը կտրած է“. այս դէպքին վրայ Ջարդը կը սաստկանայ և կըսկսին կառավարութեան տուած հրահանգին համեմատ գործադրել ոպանութիւնները։

Արդէն բոլոր տաճիկ երևելի տուներու մէջ, առաջուց շրջակայ գիւղերու թիւրքերը գալով լեցուած են եղեր, նաև շատ մը քիւրդ պոյպէկներ, բացի 1200 զինքներէ, որ դէպքերէն քանի մը օր առաջ զէնքի կանչուած ըլլալով այդ օրը զինուորական հագուստին հագած, Մարտինի և Պէրտան ձեռքերնին, փողին ձայնով ամենայն կանոնաւորութեամբ գործի կըսկսին։ Երբ Ջարդը կը սաստկանայ, կառ. շէնքին շրջականները խանութ ունեցող 40 հայ երևելիներ՝ Պաղտոյեան, Թիւթէլեան և այլք, կապաստանին կառ. շէնքը, որուն վերնայարկէն փաշան ու կառ. բարձրաստիճան պաշտօնեաներ, այդ դժոխային պարը կը դիտեն եղեր։ Բիզա փաշան ժողով կը գումարէ քաղաքին դէպքին և այս անցքերու մասին խորհրդակցելու համար։ Այդ ժողովին մէջ կառ. Նպատակին և փափաքներուն անտեղեակ հրամանատար Ապտուլլահ էֆ. կ'ըսէ թէ, „այդ յանձնուածները պաշտպանելու են և թէ ինքը կրնայ 200 զօրքով շուկայի դէպքին ալ առջևը առնել“։ Բայց միւսներուն տուած խորհուրդը կ'ըլլայ թէ „իրենք ժողովուրդէն վախնալով չեն կրնար մէկը պաշտպանել“։ Այս ժողովականաց երևելիներն են. — Հարէճի զատէ Ապտուլլահ աղա, հրամանատար Ապտի զատէ Ալի պէկ, Մուլիկի զատէ Մուհամէտ աղա և հրամանատար Եաղուպ զատէ փաշա, որոնք արդէն երեք օր առաջ կառավարչին և միֆթիին հետ որոշած են երդումով երկուշաբթի օրը Ջարդը սկսիլ, առանց մէկին իմացնելու։ Ուստի այդ յանձնուած 40 հայերու քանի մը ոստիկան տալով իբր թէ զօրանոց կը ղրկեն, հոն անոնց կեանքը ապահովելու համար, բայց հաղիւ թէ դռնէն դուրս կելլեն, գաւիթին մէջ մերկացնելով կըսպաննեն և մարմինները յօշոտելով դուրս կը նետեն։ Այդ 40 հոգիէն չորսը միայն հեռագրատան պարապ մէկ սենեկին մէջ պահուըտելով իրիկուան ժամը 12-էն վերջ, պատուհաններէն ցատկելով փողոցը՝ կը փախին, որոնցմէ մէկը դաշտին մէջ ոպաննուելով, քովը գտնուած 200 լիրաներն ալ կը յափշտակուին։ Երկուքը Պէթոյ զատէ Ահմէտի տունը կ'ապաստանին ու կը պաշտպանուին և միւսը Ս. Պաղտոյեան, քսան տարեկան դեռատի երիտասարդ մը՝ զօրանոցը Լինկա Գալային քով կերթայ, փաշան զինուորի մը հետ կառ. կը ղրկէ, որ պաշտպանուի, ճամբան այն ալ կը մեռցնեն։ Այդ 40 հոգիէն այն երկուսը միայն կազատին, որ Պէթոյ զատէին տունը ապաստանած էին։ Մէկը իր տղուն Ֆրանսերէնի դասատուն և միւսն ալ անոր սիրոյն համար։ Շուկայէն դէպի տուն փախող քրիստոնեայք կը զարնուին, որովհետև զինեալ զօրքեր և քիւրդեր ամեն փողոցներու գլուխ բռնած էին։ Ուրիշ թիւրք վաճառականներ գիտնալով թէ, Իքիքամիւլու խանին մէջ 20 հատ, բնիկ թէ պանդուխտ, վաճառականներ կան, կերթան հոն և դռները գոցելով, բնաւ չեն թողուր որ ուրիշ թիւրք հոն մտնէ, պատրուակելով թէ „հոն հայ չկայ և իրենք իրենց ապրանքը պիտի պաշտպանեն“։ Այս ուրիշ թիւրքերը հայ վաճառականներուն ամեն տեսակ վախ տալով, անոնց բոլոր ունեցածները 20 հազար ոսկի ապրանք ու ստակ իրենց սենեակներ կը փոխադրեն և հայերն ալ մստակայ մզկիթի մը ձեղունին տակ կը պահեն, խոստանալով որ անոնց կերակուր ու պաշտպանութիւն չպիտի խնայեն։ Ընդհակառակն միւս առաւօտ՝ քանի մը սրիկաներու լուր տալով մեռցնել կուտան, որով անոնց բոլոր ինչքեր կ'իւրացնեն։

Դէպքէն վերջ, այս զոհերու ընտանիքներ կը բողոքեն կառավարութեան թէ „խանը չկողոպտուեցաւ, ու մեր ապրանքներ վերցուած են“. արդիւնքը այն կըլլայ, որ կառավարութիւնը ամեն բան ստուգելէ վերջ, 2000 լիրա բաժին

կառնէ և միայն 300 լիրա ժառանգներուն կը բաժնէ։ Հաճի Ապտուլլահ էֆ., որ ինչպէս ըսի, կառավարութեան նպատակին անգիտակ քառասուն հայերը պաշտպանել ուզած էր, անոր բռնած ընթացքին չկրնալով խելք հասցնել, կը դառնայ շուկային մէջ իր խանը, դռները կը գոցէ և զինեալ մարդիկ կեցնելով, ներսը գտնուած 30 հայերը կը պաշտպանէ։ Թէև քանի մը անգամ՝ խանին վրայ յարձակում կ'ըլլայ, կրակ կը ձգեն, բայց չեն յաջողիր կեսարացի Սարգիս և Խոսրով և միւս անձերը ձեռք առնել։ Այսպէս ներսը գտնուած հայերը 10 օր պաշտպանելէ վերջ, ապահովութեամբ իրենց տեղերը կը հասցնէ։

Շուկայի ջարդն ու կողոպուտը լմնալէ վերջ, բոլոր տեղացի և շրջակայից թիւրքերը, քիւրդերը և կանոնաւոր զօրքերը կը յարձակին թաղերու վրայ, նախ Ս. Յարութիւն թաղը, ուր հայոց առներ թիւրքերու բնակարաններու հետ խառն է։ Հայերէն զէնք ունեցողներ ատիպեալ կրակին կուիլ, իսկ չունեցողներն ալ զարնիլ ու մորթիլ... Թաղի երեւելիներէն Սրտրդ պէյի հօր եղբօր որդիքը Հիւսէյին և Ալի պէյերը կը տեսնեն, որ իրենց մօտերը 150-ի չափ հայերի տասարդներ զինուած բլլալով չեն ուզեր յանձնիլ իրենք զիրենք պաշտպանելով, կերթան անոնց և բոլոր թաղեցոց հազար երդումներով ու խոստումներով կ'առաջարկեն, որ ծանրագին ինչքերին, ոսկի, արծաթ հետերնին առնելով իրենց տունները գան ապաստանին. անոնք ալ համոզելով այդ կեղծ խոստումներուն՝ 500 հոգի արու և էգ մանր ու մեծ իրենց կրնալ կրցած ապրանքներն առնելով կերթան անոնց տունները։ Խուժանը կրակի այդ մարդոց տուներու մէջ մնացածները կողոպտելէ վերջ, տունները կրակի տալ, առանց ամենափոքր ընդդիմութեան մը հանդիպելու ոևէ մէկին կողմէ։ Ալի պէկ իր հիւրերը երկու օր պահելէ վերջ, իսլամութիւն կ'առաջարկէ անոնց, որոնք մէկ բերան կը մերժեն։ Պէյերը այդ մերժումին զայրանալով՝ կը զատեն անոնցմէ 150 երիտասարդ և կ'ըսեն թէ քանի որ իսլամութիւն չէք ընդունիր, թիւրքերը մեր տուներուն վրայ ալ պիտի յարձակին, ուստի ձեզ զօրանոցը ղրկենք, որ պաշտպանուիք։ Այդ 150 երիտասարդներ հազիւ դուրս կելլեն, քանի մը հազար արիւնարբու գազաններէ կազմուած խուժան մը վրանին յարձակելով ամենքն ալ կտոր կտոր կ'ընեն, որոնց մէջէն միայն մէկը Յ. Ծերունիկեան՝ ճամբու մօտէն անցնող Ցերմէսիհ կոչուած գետակին մէջ կը նետուի և լողալով կը յաջողի ազատիլ ու իր տունը ապաստանիլ, ուր ութ օր անօթի ծարաւ նկուղի մը մէջ պահուելով, երեւան կ'ելլէ այս դէպքեր պատմելու։

Այդ թաղին մէջ մնացող քրիստոնեաները դեռ երեք օր ալ կը պատերազմին, յորում 120-ի չափ թիւրքեր կ'իյնան։ Ոսկերիչեան Յակոբ 55 զինեալ երիտասարդներով կը դիմադրէ հարիւրաւոր թիւրքերու, մինչև որ հրդեհը իր տունն ալ կը հասնի. այն առեն ճարահատեալ հոգ ապաստանող իր բոլոր դրացիներով մէկտեղ երիկ մարդիկ կը կոտորուին, կիներն ու մանուկները կը յաջողին Ս. Երրորդ. եկեղեցին փախիլ։ Այդ տանը առջև հինգ օրուան կուի միջոցին կը մեռնին 27 թիւրքեր։ Նոյնպէս Սուքիասեան Սարգիս քանի մը դրացիներով միացած, յարձակողներուն կը դիմադրէ և 18 թիւրքեր սպաննելէ վերջը, կրակը այդ տանը հասնելով իրենք ալ տանը մէջ կը վառին։

Մայր եկեղեցւոյ թաղին մէջ Ա. Սարաֆեանի տան վրայ քանի մը հարիւր հոգի յարձակելով, տանը մէջ գտնուողները օր մը դիմադրելէ վերջ, տեսնելով որ ճար չկայ, գիշերը այդիներուն մէջէն եկեղեցին կը փախին։ Դէպքին գ-րդ օրը եկեղեցիէն 5 վայրկեան հեռաւորութիւն ունեցող Քըզըլ Քէշիշեան Նազարէթ աղայի տան մէջ կ'ապաստանին իր բարեկամներէն և դրացիներէն 300 հոգի չափ անձինք։ Նազարէթ իրենց գերդաստանին վաղեմի բարեկամ թիւրք երեւելիներէն Սիւլիկի զատէ Մուհամէտ աղայի դիմելով, անոր պաշտպանութիւնը կը խնդրէ։ Մուհամէտ աղա Նազարէթի կ'ըսէ թէ, „գնա անհոգ եղիր, բոլոր ձեր տանը եղողներուն զէնքերը հաւաքելով պատիրէ, որ մէկը զէնքի ձայն չհանի, ես առտուն կամ կառավարութենէ զօրք առնելով և կամ իմ մարդիկներով առանց մէկին քիմիմ արիւնելու կը պաշտպանեմ՝"։ Միւս օրը պարապ տեղը կրսպասեն յիշեալի օգնութեան, անոնց տեղ վայրագ խուժանի մէկ մասը կը լեցուին փողոցը, կը հրդեհեն, կրակը մօտակայ տուները լափելով, այդ տունն ալ կը բռնկի, ճարահատ դուրս կը փախին կրակէն ազատելու համար և թշնամիներու ձեռք կ'իյնան։

Գտնուեցան մատի վրայ համբուած մարդիկ ալ, որ բացառութեան օրէնքը գործադրելու համար, իրենց ապաստանեալներուն խնայեցին, և հակառակ կայսերական հրամանին ջանացին կարելի եղածին չափ թեթեւացնել տալ դէպքը։ Ասոնց գլխաւորներն են Եաղուպ փաշան, յետոյ Էօմէր Ահմէտ զատէ Օսման, Շուշիկ Խելիլ էֆէնտի և Հաճի Ապտուլլահ էֆէնտի։

Աղճատաղի Պալեան և Քիւրէճիկ աշիրէթները, որոնց առաջինը 24 և երկրորդը 36 գիւղ ունի, հակառակ իրենց կառավարութեան կողմէ քանիցս զրկուած հրաւէրին, չեն գար Մալաթիայի կատորածին և կողոպուտին։ Եւ կը պահեն ու կը պաշտպանեն իրենց մէջ գտնուող հայերէն զատ, Մալաթիայէն իրենց քով ապաստանող 100-է աւելի ընտանիքներ։

***

Ցիշատակելի են ինքնապաշտպանութեան մի քանի փորձեր։

Մայր եկեղեցւոյ թաղին մէջ Սարաֆեան Աստուր աղայի տան վրայ կը յարձակին քանի մը հարիւր հոգի, անոնք ալ օր մը դիմադրելէ վերջ, տեսնելով թէ ճար չկայ, գիշերայն այդիներուն մէջէն կը փախին եկեղեցի։

Ամէ թաղի մէջ ալ գտնուեցան տուներ, որ քիչ կամ շատ դիմադրեցին և երբ տեսան թէ ալ յոյս չկայ, կրցողները փախան Ս. Երրորդութեան կամ՝ կաթոլիկներու եկեղեցիները։ Ս. Երրորդութեան թաղին մէջէն դիմադրող տուներէ յիշատակելու արժանի են՝ Պլխտանեաններու, Կէօզիւրեաններու, Շիթախեաններու, Տէր Դաւթեաններու, Անարեաններու, Ուռլեաններու, Ղըզըլ Քէշիշեաններու, Ճիվելէկեաններու և ուրիշ շատ տուներ։

Դեռ թիւրքերը եկեղեցիին վրայ չյարձակած՝ հոն ապաստանողները մօտակայ տուներէն բաւական ուտելիք բերելով մատուռը կը լեցնեն։ Երկրաշարժի ատեն այս եկեղեցիին գմբէթը ճեղքուած ըլլալով, տարի մը առաջ քանդած և երեք կանգունի չափ գմբէթին պատերը բարձրացնելով՝ ձմեռուան համար առժամանակեայ կերպով վրան տախտակով և կրդմինտրով ծածկած էին, որպէս զի դարուէնը քանդելով չինեն։ Ծողովուրդը եկեղեցին հաւաքուելէ վերջ, գմբէթին մէջ բարձրացող սանդուխ մը կը շինեն և քանի մը կանգուն փորելով ջուրի հոր մը կը բանան. նաև կերակուր

եփելու համար կաթսաներ կը պատրաստեն. բարեբախտաբար, այդ օրը յարձակումմ չ'ըլլար։ Երեքշաբթի առաւօտ Մայր եկեղեցւոյ և Ս. Երրորդութեան թաղերուն վրայ յարձակումը կըսկսի, տուները կը կողոպտեն ու կը վառեն. այս երկու թաղերը ունէին 1200 տուն բնակիչ, նահապետական բնտանիքներ 15—20 անդամներէ բաղկացեալ։ (Մալաթիա արուաշատ քաղաք մ'էր, թէև 600-ի չափ երիտասարդներ Ամերիկա գացած էին, 1000-ի չափ աղջիկներ ու կիներ Արաբկիրէն և ուրիշ տեղերէ հարս բերուած էին, այսու հանդերձ արուի և էգի համեմատութիւնը 3 առ մէկ էր, մինչ հիմա մէկ արուին 20 էգ կ'իյնայ)։

Ըսի արդէն, թէ ժողովուրդին մէկ մասը իրենց տուներուն մէջ դիմադրելով, 2 օր յուսահատ կռուելէ վերջ, երբ իրենց դիմացը կը տեսնեն քանի մը հազար հոգիի բազմութիւն մը, գիշերը տուն ու ստացուածք ձգելով, այդիներու մէջէն կը փախին եկեղեցին, որովհետև ժողովուրդը կը տեսնէ, թէ թրքաց տուները ապաստանելուն վախճանը մահ է, կառավարութեան յանձնելուն հետևանքը նոյնպէս. մէկ ճար մը կայ միայն ազատուելու—Մուհամեդը դաւանիլն ալ իր գործին չի գար, ուստի կ'որոշեն մեռնիլ քաջութեամբ։

Թաղերուն կրակ կուտան, եկեղեցիներուն շրջականները եղած տուները կը բռնկին, եկեղեցիները կը մնան բոցերու մէջ։ Հինգ-վեց հարիւրի չափ զինեալ հայ երիտասարդներ գիշերը կ'ելլեն դուրս և դաշտերուն ու այդիներուն մէջ մնացած 1000-ի չափ կին, աղջիկ ու մանուկներ գտնելով եկեղեցի կը բերեն։

Մալաթիացիք եթէ նոր ու կատարեալ զէնքեր ունենային՝ մեծ աղէտ մը պիտի բերէին թիւրքերուն գլխուն... Իրենց ունեցածները հին ու անպէտ բաներ էին. կուռոյ մէջ յաջողեցան իրենց մեռուցած թիւրքերու վրայէն 50-ի չափ մարթինի ձեռք ձգել, թէև շատ անգամ մարթինի մը ձեռք ձգելու համար քանի մը քաջեր իրենց կեանքը կը զոհէին։ Կառավարութեան մնացեալ մէկ հրահանգովը թիւրքերը բնաւ չէին թողուր, որ իրենցմէ ինկածներու դիակները գետինը մնան. մէկը իյնալուն պէս կը վազէին վերցնելու, բայց հայ երիտասարդաց գնդակներուն շնորհիւ դիակը վերցնելու գացողը ինքն ալ վրան իյնալու բախտը կունենար։ Թաղերուն տուները լմնցնելէ վերջ, բնիկ թէ շրջականներէն 20,000 անձինք յարձակեցան եկեղեցիին վրայ։

Եկեղեցիին մէջ պատսպարուածները յարմար պատեհութեամբ մը գմբեթին շեղքարէ պատերէն մաս մը քանդելով, պատնէշ մը յարմարցուցած էին և բոլոր զինեալ երիտասարդները այդ պատնէշէն ետև տեղաւորելով, պատրաստուած էին դիմադրելու։

Եկեղեցիին շրջականները, դպրոցէն ու առաջնորդարանէն զատ ամեն շէնքի վառիլը տեսնելով և վստահ ըլլալով, թէ ուշ կամ կանուխ այդ շէնքերն ալ պիտի վառին՝ հայերը իրենք բռնկցնելով մէկ ժամու մէջ մոխրակոյտի վերածեցին, որպէս զի մի գուցէ թիւրքերը գիշերը հոն լեցուելով, բարձրէն եկեղեցիին գմբեթէն ու պատուհանէն զէնք արձակեն։

Կանայք ու մանուկներ վերնատունը լեցուած կ'աղօթէին և 3 քահանաներ անդադար կը խոստովանցնէին ու կը հաղորդէին մահը իր առջևը պատրաստ տեսնող ժողովուրդը։ Կաթոլիկներու եկեղեցին ալ ճիշտ այս վիճակը ուներ. Ս. Երրորդութեան մէջ 5750 անձինք և կաթոլիկներու եկեղեցւոյն մէջ 3260 անձինք. երկու եկեղեցիներու մէջ փակուածները պառաւ կնիկներու միջոցաւ կը հաղորդակցէին իրարու հետ։ Ժամը 4-ին յարձակեցան եկեղեցիներու վրայ մինչև ժամը 12. այդ օրը 12 տարեկան տղայ մը միայն վիրաւորեցին. այս տղան վարէն վեր պատերազմողներուն ջուր կուտար։ Եկեղեցիէն նետուած գնդակներէն 30-էն աւելի թիւրքեր զարնուեցան այդ օրը։ Տասը թիւրքեր եկեղեցիին դրան մօտեցած էին վառելու կամ կոտրելու համար, անոնք ալ հոն զարնուած էին։ Ժամը 12-ին, երբ յարձակողները քաշուեցան, հայ երիտասարդներ գացին այդ դիակներուն զէնքերն ալ ներս բերին։

Գիշերուան ժամը 6-ին նորէն յարձակելով, մինչև լոյս իրարու զէնք նետեցին. երկու եկեղեցիներէն ալ մարդ չմեռաւ մութին պատճառաւ, թիւրքերէն ինկածներն ալ յայտնի չ'եղան։

Երրորդ օրը կառավարութիւնը թեզքերէ մը գրեց պաշտօնեաներուն, թէ եթէ չյանձնուիք թնդանօթի պիտի բռնենք և քարիւղով պիտի վառենք ձեզ։ Ասոր վրայ երկու եկեղեցիները բանակցելով կը յանձնարարեն Սարաֆեան Յովհաննէս էֆէնտիի, որ հետևեալ իմաստով պատասխան մը գրէ, թէ „քանի որ աշխարհի սկիզբէն չտեսնուած բաներ տեսան, շուկայի ու թաղերուն մէջ այսչափ ջարդեր եղան ու մեր ամբողջ տուները վառեցան, այլ ևս վստահութիւն չ'ունինք, բայց երբ որ քիւրդերը քաղաքէն հեռացին և թիւրք ամբոխին ձեռքէն զէնքերը առնէք, ձեզի կը յանձնուինք. մենք ապստամբներ չենք, այլ հաւատարիմ հպատակներ, մեր անձերը պաշտպանելու համար միայն հոս ապաստանած ենք. եթէ թիւրքերը մեր վրայ չյարձակին, մենք որևէ բան մը ընելու տրամադիր չենք"... Այս նամակը առաջնորդ. տեղապահ Ստեփան քահանայի Ղազել Քիւշեան, Պատ. Մարտիրոս Կիրակոսեան և կաթոլիկներու Միքայէլ վարդապետ Խաչատուրեան ստորագրելով պառաւ կնոջ մը միջոցաւ կը ղրկեն մութէն։ Ասոր վրան փաշան կը հեռագրէ կուսակալութեան, որ 2 թնդանօթ և պէօլիկ մը թնդանօթակիր զօրք ղրկեն։ Յարձակումը նորէն կը շարունակէ, զօրք, թիւրք ու քիւրդ ամենն ալ մարթինով զինուած։

Չորրորդ օրը ամբողջ կառավարական և զինուորական երևելիները կաթոլիկներու եկեղեցին մօտ թիւրք երևելիներէն Գարագաշ զատէ Մուստաֆա էֆ.-ի տունը գալով, նորէն լուր կը ղրկեն, որ յանձնուին։ Հոն կերթան կաթոլիկներու դերապետառը և վարդապետները և վերջապէս կ'որոշեն, որ այդ դիշեր կաթոլիկներու եկեղեցին յարձակումմ ապահովելու համար բոլորտիքը պահապան զինուորներ դրուին, մինչև որ հետևեալ առտուն ժողովուրդը այդ տեղէն հանելով զօրանոց տանին։ Ս. Երրորդութեան եկեղեցին դեռ չի յանձնուիր։

Միւս առտուն, հակառակ կառավարութեան տուած խոստումներուն, կաթոլիկներու եկեղեցիին վրայ ալ նորէն կը յարձակին և բուռն պայքարէ մը յետոյ, երբ կը տեսնեն, թէ չեն յաջողիր ներս մտնել, եկեղեցիին կից եղող առաջնորդարանին ու մայրապետանոցին կրակ կուտան, ամբողջ ժողովուրդը կրակներու մէջ յուսահատ կը կռուի։

Ս. Երրորդութեան եկեղեցին տակաւին կը դիմադրէ։ (Այս եկեղեցին աւելի հաստատուն շինուած է, 2 1/2 կանգուն լայնութեամբ հաստ պատերով, այնպէս որ եկած գնդակները պատին զարնելով առջևը իյնալէ զատ ուրիշ բան չէին կրնար ընել։ Անոր համար հոդ եղողները շատ մը քաջութիւններ ընելով, բաւական թուով ալ թիւրքեր ու քիւրդեր մեռուցին)։

Թիւրքին մէկը եկեղեցիին արևելեան կողմը եղող բարձր ուռենի ծառի մը վրայ ելած եկեղեցիին պատուհանէն ներս գնդակ կ'արձակէ. հայ երիտասարդը այս բանը տեսնելով, ընկերներուն կը ցուցնէ և ճիշտ բերնին գնդակ մը զարնելով կը տապալէ ծառէն վար. այդ երիտասարդը ադկէ զատ 8 քիւրդեր ալ կը մեռցնէ այդ օրը ու քանի մը ընկերներով դուրս ելնելով, անոնց մարթինները կը բերէ եկեղեցի։ Կ'ըսի թէ հայերը իրենց մեռցուցածներուն վրայէն 100-ի չափ մարթինի ձեռք ձգել յաջողած են։

Եկեղեցիին տակը եղած հայու մը տունն գաղտնի կերպով 25 նշանաւոր քիւրդեր կը մտնեն, ադկէ մատուռին տանիքը ելնելով եկեղեցիին մէջ քարիւղ լեցնելու և կրակ տալու համար. 200 զինեալ հայեր այդ տունը կը պաշարեն և դուռը կոտրելով, այդ 25-ն ալ կը մեռցնեն. իրենցմէ միայն մեկ-երկու հոգի կը վիրաւորուին։

Այսպէս եկեղեցիին կռիւը կը շարունակուէր և կառավարութիւնը ու թիւրքերը տեսան թէ վնասը իրենց է, եկեղեցիին մօտեցողը կը տապալի շարաչար և անոր դիակը վերցնելու գացողներն ալ անոր վրայ կ'իյնան ու իրենց զէնքերն ալ հայերէն գրաւուելով իրենց դէմ կը գործածի, ուստի Սասունի նախորդ գայմագամ Հաշիմ պէյ, որ Սասունի դէպքէն վերջ պաշտօնանկ ըլլալով Մալաթիա բնակութիւն հաստատած էր և Պէհէնիի գայմագամ Եաղուպ փաշան վաշտ մը զօրքով եկեղեցի գալով հաշտութիւն կ'առաջարկեն, խոստանալով, որ յանձնուելէ վերջ ոևէ մէկուն չարիք պիտի չպատահի։ Քահանաները և ժողովրդեան երևելիներէն ոմանք և բողոքականաց երէցը պատ. Մարտիրոս հաւանութիւն ցոյց կուտան. այդ երեկոյ ժողովրդեան մէկ մասը կը յանձնուի և միւս մասը կը մնայ հետևեալ առաւօտ. այդ միջոցին կարգ մը երիտասարդներ տեսնելով թէ ստիպած են թիւրքաց յանձնուիլ, նախընթաց դէպքերու մէջ ալ անոնց սուտ խոստումներուն և սուտ երդումներուն տեղեակ ըլլալով՝ իրենց անձն ու պատիւը անոնց յանձնելու անվստահ, մահը կենաց նախադաս համարելով, ա ն ձ ն ա ս պ ա ն ո ւ թ ե ա ն կը դիմեն։ Հարիւրի չափ 18—25 տարեկան երիտասարդներ քաղաքէն 8—10 ժամ հեռու Պալեան և Քիւրէճիք բուսած Աղճատաղի աշիրէթներու քով կը փախին, որովհետև այդ աշիրէթները ղրղրլպաշ ըլլալով՝ հակառակ կառավարութեան հրաւէրին ու ջանքերուն աւարի եկած չէին և եթէ գալու ալ ըլլային, կեանքը կը խնայէին։ Այնչափ մը երիտասարդ ալ դէպի Արաբկիր կը փախին, բայց Մալաթիայէն 4 ժամ հեռի, երբ Գըրդկեօղ բուսած տեղը կուգան, իրենց դէմ կը գտնեն Սենանցի աշիրէթները, որ մեծ բազմութեամբ Մալաթիա զարնելու և կողոպտելու կուգան։ Հայ երիտասարդները այդտեղ 2 ժամ պատերազմէ յետոյ, 4-ը միայն կը յաջողին դէպի ետ փախչիլ. կերթան Միւֆթիին տունը կ'ապաստանին. Միւֆթին 2 օր պահելէ վերջ, կրօնափոխութիւն կ'առաջարկէ անոնց. այդ 4-էն Քիւնտիպէկեան Գէորգ կը թլպատուի ու իր կեանքը կազատէ, միւս երեքը Միւֆթիին կատաղութեան զոհ կերթան։ Իսկ Աղճատաղ փախող երիտասարդները դէպքին գադարելէն վերջ, անվնաս ու ապահով կը դառնան ետ։

Մնացած ժողովուրդը յանձնելով քիւրդերու և թիւրքերու, ամբոխին մէջէն անցնելով ամէն տեսակ անարգանք կը տանեն, շուկայի 5 պանդոկները կը լեցնեն անօթի, ծարաւ և մերկ՝ տեղացող ձիւնին տակ. . .

ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ

ԼԱՎՐՕՎԻ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

V

ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երկու կարգի երեւոյթներ անցած եւ ներկայ կեանքում.—Կուլտուրա եւ պատմութիւն. — Ցաջորդական երեք շրջաններ մարդկային մտքի պատմութեան մէջ. — «Բաղամակրութեան խորք զաւակներ» եւ «բարձր Բաղամակրութեան վայրենիներ». —

Այն բոլոր երևոյթները, որ փուած են անցեալ և ներկայ կեանքի ընդարձակ մակերևոյթի վրայ, Լավրօվը բաժանում է երկու տարբեր կարգի։ Մի կարգի երևոյթների ամբողջութիւնը կազմում է այսպէս անուանուած „աւանդական կուլտուրան“ կամ, ինչպէս հեղինակը յաճախակի գործ է ածում, կ ո ւ լ տ ո ւ ր ա ն - ա ռ հ ա ս ա ր ա կ։ Երկրորդ կարգի երևոյթները կազմում են այն, ինչ որ մենք պատմութիւն, կամ պատմական պրոգրէս պիտի անուանենք։ Պատմութիւն և կուլտուրա, այսպիսով, կանգնած են իրար դէմ, թշնամաբար ծառացած մէկը միւսի հանդէպ։ Ուժեղ է աւանդականը, կուլտուրան, կը նշանակէ՝ թոյլ է պատմականը, պրոգրէսը։ Ուժեղ է վերջինս, կը նշանակէ՝ թոյլ է առաջինը։

Լավրօվ մի անգամ աւելի մօտիկից է բնորոշում կուլտուրան (մշակոյթ, Culture) այս խօսքերով։ Կուլտուրան, ասում է նա, հասարակակենցաղի ձևերի և հոգեկան երևոյթների այն միախմբումն է, որը մարդկային ամենահեռաւոր դարաշրջաններում, ինչպէս և յետագայ ամբողջ պատմութեան ընթացքում, սերնդից-սերունդ յաջորդւում է առանց փոփոխութեան։ Ըստինքեան հասկանալի է, որ հարցը այստեղ էականին է վերաբերում և ոչ ձևականին. բաժանումը աւելի տրամաբանական է, քան ժամանակագրական և տեղագրական։ Պատմական կեանքի տարբեր էպոխաներում մենք գտնում ենք մնայուն, աւանդական տարրեր, որոնք կողքկողքի իրենց գոյութիւնն են պահպանում փոփոխող, մարդկային գիտակցական գործողութիւններին յարմարուող տարրերի հետ։

Սակայն, այդ մնայուն, աւանդական երևոյթները չեն կարող պատմութիւն ստեղծել. չեն կարող, որովհետև ինչ որ պատմութիւնը հնարաւոր է դարձնում, դա պատմահասարակական կեանքի մէջ գիտակցօրէն փոփոխողն է։ Աւանդականը, հասարակական կեանքի մէջ պատմութիւնից դուրս մնացած տարրերի կոմպլէքսն է, դրանց բոլորի ամբողջութիւնը։ Այս մտքով քարը, օրինակ, չունի իր պատմութիւնը, որովհետև ինչ որ որոշողն է նրան որպէս „երևոյթ“, դա մնայունն է նրա մէջ, մշտապէս, աւանդօրէն կրկնուողը։ Երեկ նա այն էր, է ա պ է ս, ինչ է նա այսօր. վաղը նա կը մնայ նոյնը։ Ձևակերպող, զարգացումի ենթարկող ոյժը պա-

կասում է նրան. այդ իսկ պատճառով է, որ պակասում է նրան նաև պատմութիւնը։ Եթէ կուզէք, նա ունի „կուլտուրա“, բայց երբէ՛ք պատմութիւն։

Այս որոշակի բաժանման համեմատ Լավրովի համար պատմութիւնը որպէս պրօցէս այլ բան չէ, բայց եթէ քննադատական մտածողութեամբ վերամշակուած կուլտուրա. կամ, ինչպէս մի այլ անգամ գրում է՝ կուլտուրայի յաղթահարումն՝ քննադատօրէն մտածող անձնաւորութիւնների կողմից։

Ակներև է, որ պատմութիւնը սկսւում է ո՛չ թէ այն վայրկեանից, երբ նախամարդը ոտք է դնում „պատմական“ թատերաբեմի վրայ, իր կենդանաբանական նախորդներից տարբեր քայլելու ձևով, այլ այն ժամանակից, երբ քննադատական մտածողութիւնը սկզբնաւորւում է նրա մէջ և նրա կեանքի մի բաժինը կազմում։ Ակներև է նոյնպէս, որ „կուլտուրան“ վերջանում է ոչ այն վայրկեանին, երբ պատմական պրօցէսն է սկզբնաւորւում։ Թէ ինչ փոխյարաբերութիւններ կան երկուսի միջև — պատմական պրօցէսի և կուլտուրայի — տարբեր ժամանակաշրջաններում, այդ հարցին Լավրովը նուիրած ունի շատ լուրջ, արժէքաւոր էջեր, իր մի շարք գրուածների մէջ։ Որքան և ուշագրաւ են այդ էջերը, մենք ստիպուած ենք անցնել դրանց վրայից, նիւթիս սահմանները չ'ընդարձակելու մտահոգութեամբ։ Հարևանցի շեշտելու պէտք կայ միայն, թէ ինչպէ՞ս է պատկերացնում Լավրով քննադատական մտածողութեան զարգացման ընթացքը մարդկային հասարակութեան մէջ։

Այս հարցով զբաղուել է նա առանձնապէս „Մարդկային մտքի պատմութեան մի փորձ“ խոշոր աշխատութեան մէջ։ Հ'աւարտուած այդ երկի երկու ընդարձակ հատորներում Լավրովը գերման գիտնականի մանրակրկիտութեամբ, լայն երուդիտիսիոնով և վերլուծական կարողութեամբ, վարպետօրէն լուծել է այդ խնդիրը։

Նա ցոյց է տալիս, որ մարդկային մինչայժմեայ „պատմութիւնը“ երեք խոշոր, յաջորդական շրջաններ է ունեցել։ Սկզբնականը զուտ անթրոպոլոգիական (մարդաբանական) կամ նախապատմական շրջանն է, որտեղ բացարձակօրէն տիրապետողը աւանդականն է, սովորականը, կենդանականը։ Անթրոպոլոգիական կամ բնախօսական պահանջների շրջանից դուրս հետզհետէ զարգանում է որոշ տնտեսական և ոչ-զուտ բնախօսական պահանջների մի ուրիշ շրջան. երևան են գալիս նախնական տեխնիկայի քիչ-շատ պլանաչափ ձևեր. մարդ-անհատը բաւականաչափ ազատւում է իր զուտ բնախօսական-կենդանական մղումներից, բայց ոչ այնչափ, որ կարողանայ քննադատութեան և զարգացման պահանջ առաջացնել։

Երկրորդ շրջանի ծոցում, նոր զարթնած պահանջների թելադրութեամբ կազմաւորւում է երրորդը։ Տնտեսութեան, տեխնիկայի, մարդկային մտքի փոխազդեցութիւններով բարդանում, ճիւղաւորւում են հասարակական պրօցէսները։ Քննադատութիւնը սկսում է պահանջ դառնալ, առաջանում է զարգացման կարիքը։

Զարգացման կարիքի այս շրջանումն է, իրօք, որ սկսւում է իսկական պատմական կեանքը։ Այդ շրջանումն է, որ սոսկ ապրող անհատը դառնում է գնահատող, քննադատող, առաջադիմող անձնաւորութիւն։

Զափազանց սխալ կը լինէր, եթէ „մարդկային մտքի պատմութեան“ այս սիստեմատիկ պատկերացումից յետոյ հարց դրէր, թէ Լավրովի տեսակէտով ո՞ր էպոխաներում են սկսւում այդ շրջաններից ամեն մէկը և որտե՞ղ վերջանում դրանք։ Այդ երեք շրջանների հեռևողականութիւնը ևս սոսկ ժամանակի հեռևողականութիւն չէ։

Նախապատմական շրջանի մէջ, անշուշտ, չի կարող պատմական շրջանի մարդ-անձնաւորութիւնը երևան գալ հասարակական իր ամբողջ արժէքով։ Բայց պատմական կեանքում քննադատական անձնաւորութիւնների կողքին գտնւում է միշտ նախապատմական, կամ պատմութիւնից դուրս մնացածների բազմութիւնը։

Այդ հոծ բազմութեան մէջ մենք տեսնում ենք երկու, իրարից միանգամայն տարբեր կատեգորիաներ։ Այն հսկայական զանգուածները, որոնք բեռնաւորուած գերմարդկային աշխատանքով, կեանքի միջոցների համար մաքառելով, ոչ ժամանակ և ոչ էլ հնարաւորութիւն են ունեցել գիտակցական կեանք վարելու, մի կատեգորիա են կազմում։

Այդ դասակարգումին պատկանող անհատների կենսապայմանները թոյլ չեն տուել դրանց՝ աւանդական կուլտուրային մօտենալ քննադատական մտածողութեամբ և փոփոխել այն։ Դրանք մարդկութեան զոհերն են, „ցիծ վիլիզացիայի խորթ զաւակները“, որոնց արեան և աշխատանքի գնումն է առնուած ամեն բան, ինչ պատմական կեանքի բարձր կողմերն են կազմում։

Պատմութիւնից դուրս մնացած միւս կարգի տարրերը „ոբարձր քաղաքակրթութեան վայրենիներն“ են։ Դրանք վայելում են բազմադարեայ պատմական կեանքի բոլոր հասուն պտուղները, որոնք ստեղծուել են հարիւր միլիօնաւորների դառն աշխատանքով։ Դրանք երբէ՛ք չեն մտածում պատմութիւնը թէկուզ մի քայլ առաջ քաշելու համար։ Դրանք ապրում են կրկին աւանդական կուլտուրայով, նրա մէջ, նրա համար։ Երբէք փորձ չեն անում հասկանալու այն միջավայրը, որտեղ ապրում և վայելում են իրենք. քննադատելու, կամ բանական կերպով իրենց շրջապատը փոփոխելու ամենաթեթև պահանջն անգամ չունին դրանք։ Խորհրդապաշտական և բնազանցական մնացորդների ամենահոգատար խնամողներն են, մարդկային զարգացման impedimento-ն, խոչընդոտը։ Բարձր

կուլտուրայի այդ վայրենիները մարդկային մշուշապատ մտածողութեան մեացորդների համար ամենապարարտ հողն են ներկայացնում։

Թւով շատ են եղել առաջներում, քիչ չեն և՛ այժմ —բարձր կարգի այդ վայրենիները։ Դիտեցէ՛ք դասային, ժառանգական, ընտրական խորհուրդները և ժողովները, ամեն տեղ մեծամասնութիւն են կազմում դրանք։ Դրանց կը հանդիպէք դուք հոգևորական հերարխիաներում և դատաստանական դաշտ մէջ։ Դրանք ցցուած են յաճախ հասարակական ամբիոնների վրայ։ Գիտական ճեմարանների և ընկերութիւնների մեծամասնութիւնն են կազմում։ Բնորոշ օրինակներ տեսնում ենք ամենից յաճախակի, մեծ վեզիրների, նախարարների, հասարակապետական նախագահների մէջ, միապետական գահերի վրայ...

Բարձր կուլտուրայի վայրենին սրբազան տաճարներն է յաճախում, Ցունաստանում ըմբշամարտական վարժութիւններով է զբաղուած, հին Հռոմում զոհաբերութիւնների բոլոր մանրամասնութիւններին է ծանօթ։ Նա, պատմական դարաշրջանում ապրող, բայց կամովին պատմութիւնից դուրս մնացած այդ բարձր կարգի վայրենին, Թովմաս Ակւինացու մեկնութիւններն է լսում XIII դարում. բնախօսութիւնից կամ հռոմէական իրաւունքից քննութիւն է բռնում XIX դարում, որովհետև այդպէս են անում և ուրիշները։ Ամմանին որպէս յարգանք տրուած հանդէսներին է մասնակցում Եռանդով, Ամէնքի թատրոններում Սոֆոկլէսի ոտանաւորները լսում, Կոլիզէում գլադիատորներին ծափահարում, ծնկաչոք սողում դէպի Կոյս Մարիամի սրբութիւնները՝ Պետրոպալովեան տաճարի մէջ։ Ռէշիլեոյին Գամբէտային կամ Ռընանին մեծարում Պարիզում, հմայուլի դէմ դռները իրարից հանում Լոնդոնում, երբէ՛ք իրեն հաշիւ չտալով, թէ ինչո՞ւ, ո՞ւմ համար։

Պատմական պրոգրէսի վրայ դրանց ազդեցութիւնը միանգամայն բացասական է, դժուարացնող, բայց ոչ խափանող, որովհետև դրանց կողքին կան քննադատօրէն մտածողները, կայ հասարակական այժ դարձած պատմական մտաւորականութիւնը։ Նա է, որ հրապարակ նետուելով պարտականութեան իր գիտակցութեամբ, ամենավճռականօրէն կռիւ է յայտարարում հասարակակարգի այն տնտեսական և քաղաքական ձևերի դէմ, որոնք ճակատագրօրէն ստեղծում են քաղաքակրթութեան խորթ զաւակների հոծ բազմութիւնը. բազմութիւն, որ առանց իր յանցանքի, պատմական կեանքից դուրսն է մնացել։ Նա է զարգացման պահանջ ծնդաջպցնողը։ Նա է աւանդական կուլտուրայի յաղթահարողը, այլ և իրականացնողը պատմական պրոգրէսի։

Պրոգրէս. սակայն ի՞նչ է հասկանում Լավրովը այդ բառի տակ։ Ցեսենք։

ՍՆԱՐ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ

IX

ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՐՇԱՄԱՏՆԱՆ ՀԱՅՏՆԻՒ ՄԻՋ

Պոլսանայ մամուլը եւ հայասաւնցու վիճակը. — Քաղաքագիտական մարգանիներ. — Ե. Միսաքեան. — Ազատամտութիւն եւ կրօնական ռադիկալիզմ. — Յ. Ոսկան. — „Լուսաւորեալ“ եւ „խաւարեալ“. — Կուսակցական պայքարի այլասեռումը. — Մտնութիւն եւ պրօվոկասիօն.— Մամուլ Հայաստանի մէջ.—Խրիմեան եւ „Արծուի Վասպուրականի“.— Ողբ եւ բողոք — Ալիշան եւ Խրիմեան. — Վանեցի առաքեալը մեծ հայերի շարանի մէջ. — Դրժումը քրիստոնէական համակերպութեան. — Խրիմեան, իբրեւ միջնակէտ տանջուող եւ մխաւոր հայ աշխարհի. — Վարազի „Արծուիկներ“. — Թոխմախեան, Սրուանձտեան, Բաֆֆի. — Հայկական դժոխքը 50-ական թւականներին. — Խրիմեանի Մուսան եւ հայոց ապստամբութեան գաղափարը. —

Մամուլը ընդհանրապէս դժգոյն էր և աղքատ։ Արտաքուստ՝ պատկառելի, ներքուստ՝ անբովանդակ։ Պարբերական հրատարակութիւնները՝ բաւական խոշոր ու ծաւալուն, բայց մեծ մասամբ անկենդան։ Զքաւորութիւնը, ապահովաբար չէր գալիս տիրապետող ռէժիմից, մամուլի ու մտքի անազատութիւնից, այլ գալիս էր... գրողներից։

Հայ ժողովրդական կեանքը տեղ չունէր Կ. Պոլսի, Զմիւռնիայի այդ հայաբառբաս մամուլի մէջ *)։ Գաւառացու ծով վշտերի ու խոհերի մասին — ոչինչ, կամ գրեթէ ոչինչ։

Բայց դուք կը տեսնէիք ամեն օր այդ մեծածաւալ թերթերի մէջ քաղաքագիտական երկայնաշունչ մարզանքներ—արևմտեան այս կամ այն դէպքի կամ անձի մասին, — ուր դիպլոմատ-հրապարակագիրը անօգուտ տեղը սպառում էր իր դիւանագիտական հանճարը... Այդ մարզանքները չունէին գէթ ինքնուրոյնութեան առաքինութիւնը, նրանք գրեթէ միշտ ծաղկաքաղ էին եւրոպական լրագիրներից։

Գրիգոր Արծրունին իրաւունք ունէր, երբ—տակաւին 1872 թւականից — իր „Մշակ“ի մէջ այնքան յաճախ անդրադառնում էր պոլսահայ մամուլի յուսահատեցուցիչ դատարկութեան վրայ...

Պաթեթիկ ճառեր ու յօդուածներ ազգասիրութեան ու հայրենասիրութեան մասին — որքան կուզէք. բայց դիոգենեսեան լապտերով պիտի փնտրէք լուրջ, բանաւոր ուսումնասիրութիւններ հայ ժողովրդի կենցաղի մասին, եթէ ոչ նրա կրած տառապանքների (բնազդային երկ-

*) Խոշոր օրգաններից էին „Արշալոյս Արարատեան“, „Հայաստան“ և „Մասիս“, տուաջինը Իզմիրի մէջ։

չուութիւնը կարող էր արգելք լինել գրան), գէթ այնպիսի խնդիրների մասին, որոնք այս կամ այն ձևով շօշափում էին այդ ժողովրդի բազմադարեայ կեանքը, նրա առօրեայ նիստ ու կացը և նրա առօրեայ յարաբերութիւնները իր ցեղագրական միջավայրում, իրեն շրջապատող տարրերի հետ։

Այդպէս էլ մնաց պօլսահայ մամուլը իր գրեթէ ամբողջ գոյութեան ընթացքում, նաև Ազգային Սահմանադրութիւնից յետոյ։ Ուսումնասիրող ոգին, հայրենի երկրի ու ժողովրդի դարաւոր պատմութիւնը, այդ պատմութեան փիլիսոփայութիւնը որոնող, խուզարկող ու լուսաբանող միտքը գրեթէ իսպառ բացակայում էր պօլսահայ մտաւորականութեան մէջ, անգամ այն մտաւորականութեան՝ որ եւրոպական դպրոց էր անցել, որ առատօրէն բերել էր իր հետ համալսարանական դիպլոմներ։

Հեռուէն-հեռու, մի Զօրայեան, մի Միսաքեան, մի Յ. Ոսկան բերում էին երբեմնապէս իրենց „Մոգեռն“, քննադատական մտքի շողը, տալիս էին մի քանի լուրջ յօդուածներ տնտեսագիտութեան, համաշխարհային քաղաքակրթութեան կամ ազատ մտքի էվոլիւցիայի մասին, այն էլ ընդհանրապէս վերացական, ակադէմիկ ձևով, որ չէր կարող տաքացնել հայ մտաւոր կեանքը, չէր կարող գրգռել հայ ուսումնասէր երիտասարդութեան ուղեղը, ալէկոծել նրա հոգին։

Եւ, սակայն, այդ մի քանի մտաւորականների թղթակցութիւններն ու յօդուածները գրեթէ միակ գնահատելի ժառանգութիւնն է այն հեռաւոր օրերի հայկական հրապարակագրութիւնից... Նրանց վրայ է, որ փոքր ինչ հանգստանում է մեր, յետնորդներիս, խուզարկու և հետաքրքիր միտքը։ Յիսունական թուականների վերջերում „Մասիս“ի մէջ հրատարակւում է Խաչատուր Միսաքեանի շահեկան յօդուածաշարքը, գրուած Պարիզից, „Քաղաքակրթութեան Առեղծուածը“ խորագրով։ Ուսումնական հեղինակը շեշտում է այն ահագին կարևորութիւնը, որ ունին ազգերի զարգացման պրոցէսի մէջ՝ լեզուն, գրականութիւնը և պատմական աւանդութիւնները և հաստատում է, որ ոչ մի բռնակալական հալածանք չէ կարող ջլատել մի ազգի ինքնուրոյնութիւնը... Հին ժամանակներում — ասում է—պատերազմներն ու ասպատակութիւնները կարող էին ջնջել ամբողջ ազգեր, ոչնչացնելով նրանց մատեաններն ու թղթերը, պատմութիւն, լեզու, գրականութիւն և այլն,— սակայն նոր ժամանակում այդ այլ ևս անհնարին է։

... Այս դարուս սկիզբը բոլոր Եւրոպայի երեսը Նափոլէոնի բրած սոսկալի և երկարատև արշաւանքը ոչ պակաս երկիրներ դղրդեցուցին, ոչ պակաս քաղաքներ հրով ու սրով հիմնայատակ ըրին, ոչ պակաս ժողովուրդներ կապտեցին, կողոպտեցին, ոչ պակաս մարդ տառապեցուցին ու կոտորեցին, ոչ պակաս գործարաններ ու արուեստարաններ կործանեցին ու քանդեցին և ոչ պակաս յիշատակարաններ աւերեցին կամ ջնջեցին։ Եւ, սակայն, առոյգ Եւրոպան իր փլատակաց ու մոխիրներու տակէն հզօր յարեաւ...

Եւ ապա վեր է հանում տպագրութեան, մամուլի հոկայ դերը։

... Մամուլը — արդասաւորիչ, անմահարար զօրութիւնը... աշխարհքը շարժող բանին (խօսքի) ինքնակալութիւնը հաստատող, մարդկային պատիւը պաշտպանող, պարտեաց և իրաւունքի սահմանները որոշող, գերութեան կապանքն օրէօր խզող, մարդը հաւասարի համար կրակը դնողին բռնակալութիւնը կործանող, մարդուն անձնիշխանութիւնը, խիղճը և ազատութիւնը հրատարակող և ապահովող զօրութիւնը...

Եւրոպայի այս օրուան բարգաւաճութիւնը տպագրութեան շնորհիւն է... և եթէ ատոր մեր ազգայիններն ալ կը հաւատան նէ, կը հարցնենք, թէ տպագրութիւնն ի՞նչ ի՛ընէ կոր մեր մէջ...

Հայոց մէջ ալ պէտք է որ խմացական մարդը քիչ մը խլրտի, շարժի ու առաջ երթայ... Ազէկ գիտնանք, որ ազգային շարժման թափ տուողը տպագրութիւնն է *)...

Երբեմն-երբեմն պօլսահայ հրապարակագիրը շօշափում էր — թռուցիկ, միջանկեալ ձևով — ընկերական խնդիրներ ևս, դասակարգերի փոխ-յարաբերութիւններ, հարստութեան ու չքաւորութեան պրոբլեմներ և այլն— շօշափում էր և լուծում երկու խօսքով, արևմտեան բուրժուազիայի աւետարանից փոխ առած պատրաստի բանաձևերով։ Այդպիսի մի պրոբլեմ էր առաջադրել „Մասիս“ օրագրի առաջին տարեայ (1852 թ.) առաջին համարի խմբագրականը.

Մենք կը կարծենք, որ ազգի մը մէջէն աղքատութեան սերմը չքացնելու համար մէկ կողմէն լուսաւորութիւնն ու ճարտարարուեստը անոր մէջ տարածելու է գպրոցներու միջոցաւ ու մէկ ալ կողմէն բարոյական հիմնարկութիւններով հասարակութեան մէջ առաքինութեան, աշխատասիրութեան, խնայողութեան ու բաւականասիրութեան ոգին տարածելու է։

Մենք կը կարծենք, որ ազգի մը վերին, միջին ու ստորին կարգերը իրարու հետ անանկ սերտ կապակցութիւն մը ունին, որ մէկ կարգին ազէկութիւնը կամ գէշութիւնը հարկաւ միւսներուն ալ կը հասնի... Վերին կարգի պաշտօնէն է հոգալ, խնամել և հսկել. միջին կարգին պաշտօնն է՝ հնազանդիլ ու գործակից ըլլալ. ու ստորին կարգի պաշտօնն ալ՝ անսալ և երախտագէտ ըլլալն է...

Դասակարգային յարաբերութեան նոյն նահապետական ըմբռնումն ենք տեսնում „Հայաստան“ լրագրի հեռևեալ պարբերութեան մէջ.

Ազգի մը մէջ երկու կարգ ազգայինք կան։ Մէկը թէ հայրենեաց թէ հայրենի կրօնի և օրինաց պաշտպանութեանը համար ազգի կողմանէ ընտրուածներն են. և միւսը աս պաշտպանութիւնը յանձնառու ըլլող և այն պաշտպանութեանը տակը գտնուողներն են...

Քանի աւելի ենք մտնում վաթսունական թուականների մեծ շարժման, այնքան աւելի է կենդանանում մամուլը, այնքան աւելի է շեշտւում հայ առաջադէմ մտաւորականութեան ռադիկալիզմը (արմատական դաւանանքն ու տրամադրութիւնը) թէ քաղաքական և թէ սոցիալական ու կրօնական խնդիրների մէջ։

Յ. Ոսկան նոյն „Մասիս“ի մէջ ողբում ու անիծում է, որ կրօնի ու կղերի խտրական ոգու շնորհիւ, ազգը

*) „Մասիս“, 1859 թ. 31 դեկտեմբեր։

պառակտուած է (լուսաւորչական, բողոքական, կաթոլիկ) և „հայազգի եղբարքը տարազգի ըլլալու չափ իրարմէ կը խորշին“...

Ի՞նչ էր ժողովուրդը անցեալին մէջ... խոպան բթամիտներու խումբ մը, զոր խիստ դիւրին էր, իբրև աչքը գոց ջուիր մը վարել և նիւթականով մը գոհացնել...

Այժմ հրապարակ է իջել առաջադիմական երիտասարդութիւնը և բաց է արել ժողովրդի աչքերը...

Այժմ ժողովուրդը կուզէ հաւատք՝ առանց գժտութեան, ազգութիւն՝ առանց խտրութեան, դաստիարակութիւն՝ առանց մոլեռանդութեան...

Եւ Ոսկան յորդորում է հետապնդել միայն ու միայն

ճշմարտութեան.

ճշմարտութիւն՝ որ բանտի մէջ չի զսպուիր, աքսորի մէջ չի վհատիր, հողի տակ անգամ չի մեռնիր...

Զարմանալի է այդ կրօնական ռադիկալիզմը, հեռու է նա աթէիստական այն մեծ, գայթակղեցուցիչ հոսանքից, որ յիսունական և վաթսունական թուականներին Ֆոխտի, Բիւխնէրի, Դարվինի և այլոց մղումով տարածուել էր եւրոպական ցամաքի վրայ, նուաճել էր ազատութեան ծարաւի մտքերը՝ մասնաւորապէս բռնապետական երկրների մէջ։

Այնուամենայնիւ, հայ ուսումնասէր երիտասարդութեան այդ երկչոտ ու հեղհեղուկ ազատամտութիւնն անգամ (կրօնական հարցերի մէջ) փոթորիկ էր յարուցել հայ կղերի և ամբողջ խաւարամիտ բանակի մէջ։ Ազատամիտները հալածւում էին, որպէս „անհաւատ“... Եւ այդ անիրաւ ամբաստանութեամբ ձգտում էին մէկէն ի մէկ ջախջախել, չեզոքացնել հայ նորաբողբոջ առաջադիմական միտքն ու հոգին։ Երկու տարրեր — դէմ յանդիման. „լուսաւորեալք“ և „խաւարեալք“։

Ոսկան անողորմ է վերջինների հանդէպ.

Ո՞վ կղերդ ժողովրդեան հայոց, եթէ քու տգիտութիւնդ կամաւ չէ, ահա օր այցելութեան Ցեառն 'ի վերայ քու Սթափէ՛ թմրութենէդ և փոխանակ քո մէջդ եղող քանի մը ուսեալները իզուր իբրև անհաւատ բամբասելու, նախ զանոնք քեզի ուսուցիչ կարգէ, օ՜ն արի՛ և ճանչցի՛ր քու պարտականութիւններդ... („Մասիս“, 11 հոկտ. 1861)։

Պայքարը սաստկանում էր հետզհետէ երկու հակադարձ բանակների միջև. մինը — առաջադէմ փոքրամասնութիւնը, որ Ազգին ու Հայրենիքին երկրպագելով հանդերձ, որոշել էր առաջ ընթանալ համաձայն գիտութեան և ժամանակի պահանջների, խորտակել բորբոսնած ռուտինը, աւանդապաշտ և սնապաշտ ոգին, միւսը — պահպանողական մեծամասնութիւնը, որ ձգտում էր անխախտ պահել իշխող դասակարգերի հինաւուրց առանձնաշնորհումները, կրօնի ու կղերի տարամերժ նախիշխանութիւնը (*hégémonie*)։

Կուսակցական պայքարը այլասերուեց շուտով. տեղացին մասնութիւններն ու դաւաճան գաղտասուքները։ Լոյսի երգչաալ թշնամիներն սկսեցին լուրեր տարածել, թէ հայ ազատամիտ երիտասարդութիւնը ոչ միայն անհաւատ է, այլ և անհաւատարիմ, քաղաքականապէս անվստահելի, թէ նա միտք ունի վերականգնել „հայկական թագաւորութիւնը“...

Երիտասարդները կատաղում են այդ անորակելի ինսինուացիաների հանդէպ, խստօրէն պահանջում են բացատրութիւն, ոմանք նոյնիսկ սպառնում են տերբօրի տալ մատնիչներին...

Այս Հազիւ միայն երևան եկաւ ազատամիտ, առաջադիմական ոգին հայ մտաւորականութեան որոշ խաւերում, հազիւ միայն այդ տարրը գործունէութեան ասպարէզ նետուեց նորագոյն աշխարհահայեացքի նշանաբաններով, — և ահա մատնիչութեան վարեմի պատուհասը ցցուեց ազգային վերածնութեան ռահվիրաների դէմ։

„Հայ մտաւորականութիւնը անհաւատ է, անաստուած է, նա կուզէ քանդել ազգ ու եկեղեցի, նա գաւադրում է պետութեան դէմ, նա ձգտում է վերահաստատել անկախ Հայաստան“...

Այդ ազգադաւ ամբաստանութիւնները հրապարակ են գալիս այնուհետև պարբերաբար — թիւրքահայ և ռուսահայ հասարակական էջերի մէջ — ամեն անգամ, երբ հայ մտքի առաջադէմ հոսանքը համարձակ գրոհ է տալիս հին, փտած սովորութիւնների ու հաստատութիւնների դէմ։ Նոյն կոչերն ու ահազանգը հնչեցին ռուսահայ „խաւարեալների“ բանակից — „Մեղու Հայաստանի“ից և յաջորդական, գաղափարակից օրգաններից — ընդդէմ Գրիգոր Արծրունու և նրա վարած դպրոցի։ Իսկ երբ յետոյ բեմ եկան — կեանքի լայն ու փոթորկուող կրկէսի մէջ — նոր, աւելի ձախակողմեան տարրեր, նոր, աւելի արմատական ու յեղափոխիչ մի հոսանք ի դէմս „Դաշնակցութեան“, որ ազատ օրերում բազմեց տիրականորէն հայ կեանքի բոլոր լեգալ և ոչ լեգալ հաստատութիւնների մէջ, այն ժամանակ նախկին „լուսաւորեալները“ մի անակնկալ յետաշրջումով մղեցին դէպի „խաւարեալների“ շարքերը, գրեթէ իսպառ լուծուեցին նրանց հետ... և նոյն զազրելի գաղտասուքները ընդդէմ այդ նոր յեղափոխական երիտասարդութեան մենք լսեցինք այդ միացեալ օբսկուրանտների շարքերից։

Ցիսունական և վաթսունական թուականների հայ ազատամիտ ուսումնականները յուսահատ կատաղութեամբ խարանեցին այդ յոռի բարքերը, որոնց մէջ այնքան խոր արմատ էր ձգել ապականութեան ու ազգուրացութեան թոյնը և եղբայրադաւ ու պառակտիչ բնազդը։ Եւ այն ժամանակից ի վեր հայրենասիրական ճառերի ու պաթեթիկ յօդուածների մէջ յաճախ էր հոլովւում տարածուած հայեացքը, որ հազար տարինե-

րից ի վեր շեշտել էին հայ մատենագիրները ծանօթ խօսքերով. „Հայը ոչ միաբանին“. „Հայոց հոգին ընկերական չէ“. „Անմիաբանութիւնը կործանեց Հայոց ազգը“...

Աւելի բանաստեղծ, քան պատմութեան փիլիսոփայ՝ մեր մատենագիրները, առանց խորը մտնելու անցքերի պատճառների շարանի մէջ, իւրաքանչիւր մի ազգաջինջ աղէտի հանդէպ „անմիաբանութիւնն“ են պատճառ բռնել և լացել ու խարանել անսփոփ երեմիականներով ու շանթոտ մեղադրականներով։ Եւ սակայն, այդ հայեացքը իր հասկանալի չափազանցութեամբ հանդերձ ունի, անշուշտ, իր հայկական *raison d'être*-ը. և այդ պառակտիչ բնազդը, այդ այլամերժ, անհատապաշտ ոգին, հայ գործիչի յաճախ անսանձ, անարշիկ ու խռովարար ինդիվիդուալիզմը, հայ համայնքի ներքին շաղուանութի պակասը, ընկերական զգացումի ծայրայեղ թուլութիւնը պիտի վեր հանեն ապագայում — ցաւով ու անէծքով—իրենց գործնական քարոզների կամ տեսական մարզանքների մէջ՝ հայ վերածնութեան նորագոյն առաքեալներն ևս,—Նալբանդեան, Բաֆֆի, Պատկանեան, Արծրունի և ուրիշներ, իսկ յեղափոխական պարագլուխներից՝ Փօրթուգալեան և Քրիստաֆոր Միքայէլեան։

***

Վատ տարրերը մատնութեամբ ու այլ ցած միջոցներով գործում էին ստւերի մէջ, ձգտելով վարկաբեկել նորածիլ ազգային սահմանադրութիւնն ևս, որ հռչակում էին իբրև օճախ անհաւասութեան, ռամկավարութեան ու յեղափոխութեան... Այդպէս է վկայում „Մասիս“ թերթը իր 1861-ի 17 օգոստ. համարի մէջ։

Յեղափոխութեան օճախ — մի հաստատութիւն, որ տակաւին չէր էլ կերպարանաւորուել և որի միակ նպատակն էր՝ բարեկարգել դպրոցները, հիւանդանոցները, վանքերը...

Զարմանալի չէ, որ շուտով մեր ներքին տարդի թշնամիներին ձայնակցելով թիւրքական աշխարհում իսկ, պաշտօնական կամ մասնաւոր շրջաններում երևան եկան ճշմարիտ պրովոկատորներ, ամեն տեսակ „գրգռիչ գործակալներ“, որոնք սկսեցին զարկել ահազանգը, տարածել ստայօդ ու սենսասիոն լուրեր „հայերի ռազմական, ապստամբական պատրաստութիւնների“ մասին... դեռ յիսունակա՛ն թուականներում...

Այդ մասին մի քանի ուշագրաւ տեղեկութիւններ գտնում ենք այն ժամանակուայ հայ և օտար մամուլի մէջ։

1854 թ-ին, Ղրիմի պատերազմի ժամանակ, մի օր Իզմիրից հեռաձայն էին գրում Պոլսի մէջ հրատարակուող *Le Journal de Constantinople* թերթին.

Կը հաստատեն, թէ Մէնէմէնի (Իզմիրէն 5 ժամ հեռու գիւղ մը) հայոց եկեղեցու մէջէն պահուած զէնքեր գտնուեցան. բայց դեռ չենք գիտեր, թէ այս զէնքերը պահողներուն դէմ ի՞նչ միջոցներ ձեռք առնուեցան, ըստ որում հայերը կը պնդեն, թէ յոյները իրենցմէ գաղտուկ բերեր պահեր են զանոնք իրենց եկեղեցւոյն մէջ...

Հայ շրջանները դող է ընկնում։ Եւ անմիջապէս Իզմիրի „բարեմիտ ազգայիները“ բողոք են յայտնում կուսակալին և հետևեալ գրութիւնն են հրատարակում տեղւոյն *Impartial* թերթի մէջ.

Այս տողերը ի՞նչ դիտաւորութեամբ գրուած են արդեօք։ Ո՞ր փողոցին անկիւնէն ժողուած են այս չարակամ զրոյցները, որ ամենևին հիմ չունին։ Վեհափառ սուլթանին օգոստափառ անձին և անոր կառավարութեան համար հայոց ազգին ունեցած զգացումները... Եւայլն։

Զարդի երկիւղը դեռ այն ժամանակ դամոկլեան սրի պէս կախուած է եղել հայոց գլխին... Ահա թէ ինչ էր գրում „Մասիս“ը 1854 թ. 4 նոյեմբերի իր առաջնորդողի մէջ.

Ժամանակէ մը ի վեր ազգերնուս թշնամի մարդիկ անխիղճ չարամտութեամբ և յանդուգն լրբութեամբ ազգերնիս բամբասելու և օսմանեան բարեխնամ տէրութեան առջև անոր վաղժամանակեայ հաւատարիմ հպատակութեան անարատ համբաւը կոտրելու աշխատելով։ Թէպէտ կայսերական լուսաւորեալ կառավարութիւնը հայոց ազգին բնատուր հեզ և տիրասէր բնաւորութիւնը լաւ կը ճանչնայ, այսուամենայնիւ, Սրբազան Պատրիարք Հայրը պատշաճ դատեց յատուկ աղերսագրով մը բողոքել Բարձր Դրան...

Սուլթանը, տեսնելով հայ հասարակութեան այդ ծայրայեղ դիւրազգացութիւնը, վստահութիւն է յայտնում հայ ազգին, պատրիարքը կոնդակ է գրում այդ առթիւ և մի կիրակի օր նա կարդացուում է Կ. Պոլսի հայ եկեղեցիներում...

Անպատմելի ուրախութիւն պատճառեց ժողովրդեան և հանդիսաւոր, ջերմեռանդ բարեմաղթութիւններ վասն պահպանութեան անգին կենաց մեր արդարասէր Ինքնակալին, որուն հայրախնամ կառավարութիւն այսչափ գութ և սէր կը ցուցնէ Հայոց ազգին վրայ...

Կ. Պոլսի հայութիւնը և մանաւանդ ազգի երևելիները գոհ լինելու պատճառ ունէին, բայց մենք կը տեսնենք քիչ յետոյ, թէ ինչ էր ներկայացնում հայ ժողովրդի իրական վիճակը... Հայաստանի մէջ։

Շշուկները, կասկածները, „հայկական ապստամբութեան“ վտանգը և նրա առթիւ բարձրացած ալարմը անհիմն էին, անտարակոյս, „հայոց ազգի հեզ և տիրապէս բնաւորութիւնը“, արդարև, անժխտելի մի իրողութիւն էր, որ շեշտուում էր Հայաստանի բովանդակ տարածութեան վրայ։ Այն ժամանակ, երբ բալկանեան մի շարք ժողովուրդներ համակուել էին ազատութեան ու ապստամբութեան հովերով, ոմանք արդէն ազատուել, ուրիշները պատրաստում էին իրենց ազատագրումը, երբ եւրոպական լախտի հարուածները ընդհատ-ընդհատ շրջունակում էին տեղալ „հիւանդ Մարդու“ մէջքի վրայ, երբ, չնայեած Ղրիմի պատերազմի յարուցած վայրկենական լաւատեսութեան՝ այդ հիւանդը դատապարտած

էր անխուսափելի և ասիճանական անդամահատման,— օսմանեան հայութիւնը, ի գէմս իր առաջաւոր ու ազդեցիկ տարրերի, Կ. Պոլսի հասարակութեան, աղօթքներ և հլու հպատակութեան ուղերձներ էր առաքում վեհապետին, կեղծօրէն—գուցէ և անկեղծօրէն — հռչակում էր նրա հայրախնամ կառավարութիւնը և հայ ազգի երջանիկ կացութիւնը... Իսկ Կ. Պոլսի հայ մամուլը, որ խանդավառ առաջնորդողների մէջ իսկ ջատագովում էր սուլթաններին, զաքարէական պապանձումն էր ցոյց տալիս գաւառական հայութեան անլուր տանջանքների նկատմամբ, հայ թերթերը բացարձակապէս անգիտանում էին Հայաստանն ու հայ ժողովուրդը, գաւառական միլիոնաւոր ու աշխատաւոր ընդհանրութիւնը... բաւականանալով ազգասիրական պաթեթիկ և պլատոնիկ կոչերով, ակադէմիական ընդհանրապէս չոր ու ցամաք տեսութիւններով և անդադրում բանակռիւներով „Հայաստանեայց առաքելական եկեղեցիի“ շուրջ...

Մի ձայն միայն հնչում էր՝ բարձր ու խրոխտ՝ այդ վեհերոտ, մեղկացուցիչ լռութեան մէջ, հնչում էր մարդկային արժանապատուութեան գիտակցութեամբ, առանց բնաւ սողալու, շոյելու, երկրպագելու, առանց բնաւ վարագուրելու Մեծ Համբի, Ծողովրդի արիւնահոս վերքերը, հայկական արիւնաներկ ու անիծակուռ դժոխքը... Ձայնը հնչում էր Վասպուրականից, Վարագայ բարձունքներից, ուր թառել էր Արծիւը գուտտենբերգեան մեքենան շալակած և ուսկից նա թափահարում էր անդադար իր հզօր թևերը, արձակում էր իր սուր ճիչը դէպի հայոց աշխարհի մշուշապատ օրիզոնները, լալիս էր իր հարազատ ժողովրդի հետ, մարմնացնում էր նրա տանջանքն ու նահատակութիւնը և շեփորում նրա յուսահատ բողոքը խաւարի ու բռնութեան համատարած ուժերի դէմ։

Խրիմեանն էր։ Այն ժամանակւայ հայութեան խիղճը, նրա իղձերի սգաւոր և ցաւատանջ թարգմանը։ „Վասպուրականի Արծիւը“ գուցէ միակ յեղափոխական իրողութիւնն էր հայկական օրիզոններում, միակ օրգանը հայրենիքի մէջ, որ նրա անհամար փլատակները ողբալով հանդերձ, կուռ, ըմբոստացման հրաւէր էր կարդում նոր սերունդին։ Ողբն ու բողոքը հիւսւում էին մի ցաւոտ ու միալար աղաղակի մէջ, որ բարձրանում էր Վարագի անշուք տպարանից, գնում էր հեռուն, մինչև Պոլիս, Կովկաս, Պարսկաստան, խօսում էր ամենուրեք բուն երկրի, ժողովրդի ցաւերից, տանում էր ամենուրեք հայրենեաց սարերի ու հովիտների բուրմունքը, լցնում էր սրտերը հայրենասիրական մի ջերմ, սրբազան խանդավառութեամբ։

Հայր Ալիշանն էր—հատատուած հայրենի հողի վրայ, հարազատ ցեղի ծոցում, նրա հսկայ ողբերգութեան անմիջապէս հաղորդակից, նրա վշտոտ գանգատներին անմիջապէս ձայնակից... Հայր Ալիշանն էր, գուցէ նուազ բանաստեղծ, քան Աւարայրի երգիչը, բայց աւելի ինքնատիպ և խորունկ, աւելի հզօր ժտայնութեամբ ու սլացքով, միանգամայն վարպետ գրչի և խօսքի, միանգամայն գրող, խօսող և գործող... մի վարպետ՝ ինքնածին, բնատուր, եզակի՝ առանց քիչ-շատ կանոնաւոր կրթութեան, որ սակայն զարմացնում էր ունկնդրին իր հրահանգիչ խօսքով ու ներհուն իմաստութեամբ, մի հանածոյ, անզուտ մետաղ, որ հնչում էր զմայլելի զօրանջներով, մի տիպար ճշմարիտ առաքելի, որի վսեմ նայուածքի մէջ հարազատ ժողովրդի լեռնացած վիշտն էր ցոլում, որի պարզ ու պարթև կերպարանքը „անձնաւորում“ էր Հայաստանի բարձրագագաթ լեռնային զանգուածների, նրա յստակ ու լայնարձակ օրիզոնների ու ջրերի“...

Առաջին աբեղան էր, որ դարձաւ պուբլիցիստ, հրապարակախօս, առաջին վարդապետն էր, որ մերժեց վանական ամուլ կեանքը և նուիրուեց իր բովանդակ էութեամբ — աշխատաւոր ժողովրդին։ Հայկական դէմօկրատիզմը—ռամկավարական հոսանքը —չի ունեցել թերևս աւելի պերճ և անաղարտ ներկայացուցիչ, աւելի հզօր և համոզուած ռահվիրայ, քան այդ „մոլորուած“ աբեղան։ Յայսմաւուրքը, Շարականը դուրս մնացին նրա առօրեայ մտահոգութիւններից և եկեղեցու բեմից հնչեց հայրենասիրական քարոզը — ջերմ, ազդու, խրախուսիչ — հնչեցին Հայկի ու Արամի անունները. նոյն բեմից աղօթքի հետ տեղացին ազատախօս վարդապետի շանթերը վաշխառուների, կաշառակեր հոգևորականների և աշխատաւոր ժողովրդի ամեն տեսակ ցեցերի դէմ. նոյն բեմից խարանուեց կեղծիքը, տգիտութիւնը, ջատագովուեց ուսումը, ժողովրդական դպրոցն ու մշակոյթը, գիտութեան ու քաղաքակրթութեան վերջին խօսքը, որ հայրենասէր աբեղան իւրացրել էր ընթերցանութեամբ, սովորել էր այն ժամանակւայ հայ ազգատիպ գրականութիւնից։

Ինքնուսի (*autodidacte*) այդ հաղւագիւտ տիպարը շատապ-շատապ ամբարում է իր մտաւոր պաշարը, արագօրէն զարգանում ու առաջադիմում, շնորհիւ իր դիտելու և ըմբռնելու արտասովոր կարողութեան, շնորհիւ մանաւանդ իր երկար ու հեռաւոր պտոյտներին—Թիւրքիա, Կովկաս, Պարսկաստան։ Ամեն տեղ ուշի ուշով դիտում է, ուսումնասիրում հայ կեանքն ու հինաւուրց աւերակները, ամեն տեղ իր դիւթիչ քարոզներով, իր անպաճոյճ, բիբլիական բարբառով արծարծում էր հայրենասիրական կրակը, բարձրացնում էր ընկճուած սրտերը և հրաւիրում բոլորին դէպի գործ, դէպի անխոնջ հայրենաշէն աշխատանք։

Գրիչը—ոչ նուազ զօրաւոր, քան խօսքը։ Որքա՜ն ոյժ, գեղեցկութիւն ու կրակ կայ այդ յուսահատ, պոռոտագին կոչերի, այդ ողբերի, երեմիականների, այդ առ-

նական ու մարտաշունչ յորդորների մէջ, որոնցով լի է Խրիմեանական գրականութիւնը՝ սկսած իր անդրանիկ „Հրաւիրակ Արարատեան“ից, ուր առաջին անգամը թոթովում է հայրենասէր բանաստեղծի քնարը, մինչև „Արծուի Վասպուրական“ի բարձրաթռիչ, հայրենաշունչ էջերը, ուր փուում է ձեր աչքի առջև լայնածաւալ Հայաստանը իր սրտայոյզ տեսարաններով, իր վեհապանծ փլատակներով, Մեսրոպների ու Վարդանների դեռ խօսուն սուրերներով... և այդ հսկայ ու լքաւեր գաւլերէի մէջ տեսնում էք—աւերակների վրայ թառած—Խրիմեանի տիտանեան կերպարանքը, որ ողբում է և յորդորում ու խրախուսում անդադար, որ կոչում է թափառական, օտարացող հայութիւնը „դէպի երկի՞ր, դէպի երկի՞ր“... „Արթնցէ՛ք, հայկայ որդիք, արթնցէ՛ք“...

Ձե՛զ մեան ծնունդք հայկերան, ձե՛զ մեան խախտեալ հիմունք հայրենեաց 'ի շինել, 'ի վերանորոգել. վեմք անկեան նոցին թաղեալ 'ի խոր ի ներքինջ ընդ հողով, ձե՛զ մեան զ'արև և զփառս հաստատել. ապա ժողովեցարուք, արի՛ք ի վայրավատին բաժանմանէ... հասեալ շուրջ փարեցարուք զանմահ յիշատակօք ձերդ նախնեաց. մինչև ե՞րբ այրի մնացեալ ողբոյսրինեսցէ Անին բազմասուգ. Դուին, Վաղարշապատ, Գառնի, Տիգրանաշէն... և անդրանիկ աթոռն Թադէի, դաշտն արտաշական Աւարայրին ամայացեալ. մինչև ց'ե՞րբ Տղմուտ սահեալ գլորիցի տխուր, լռիկ և մեջիկ. մինչև ց'ե՞րբ վեմ արձանն մեծին Հայկայ 'ի հող աննշմարելի անկանգուն մնասցէ և ի դաշտին Շաւարշական ոչ բարձրասցի ոսկենկար արձանն յիշատակած մեծին Վարդանայ... Մի՛ վհատիք, ոչ գոյ Յուլիանոս, Յազկերտ, Լանկիմամուր հալածիչ քրիստոնէական կրօնի, արևն քաղաքակրթութեան 'ի հորիզոն երկնից բարձրացաւ. չիք բարբարոսական բռնակալութիւն կամաց *)...

„Արևն քաղաքակրթութեան ի հորիզոն երկնից բարձրացաւ...“

Այդ հաւատն է թերևս, որ թելադրում էր Խրիմեանի յեղափոխական աշակերտներից մէկին, Արսէն Թոխմախեանին, գրել նոյն տարւայ յունուարի համարում իր սիրուն ոտանաւորը, որ Հայաստանի գարունն է գուշակում.

. . . . . .
Լեռնակուտակ հալին ձիւնք,
Գայ բաղձալին այն գարուն
Յոր վարդենին և շուշան
Ի խաղս առուաց կան զուարթուն.
Եւ կաթնորակ աղբերունք
Ցայտեալ վիժին 'ի մարմանդ
Վառեալ սխալն սիրելոյն
Ձայնէ մեղմիկ վարդենւոյն
Աւետելով նոր գարուն...

„Գարնան“ աւետողը պիտի դառնար յետագայում հայ ազատագրական շարժման առաջին ռահվիրաներից մինը—գեղեցիկ սկզբնաւորութեամբ և ցնցող, ողբերգական վախճանով...

"Արևն ի հորիզոն երկնից բարձրացաւ, չիք բարբարոսական բռնակալութիւն"...

*) „Արծուի Վասպուրական“, 1859 թ. մայիս։

Պարուրի՞չ է տեսարանը այդ բարձրացող արևի,—Խրիմեան վաղուց զգացել է նրա փրկաւէտ ճառագայթները, ուստի և „Արծուի Վասպուրականի“ն չի բաւականանում սոսկ լալկան մեղեդիներով, սոսկ ամուլ, սգաշունչ երեմիականներով, այլ և մերթ ընդ մերթ ըմբոստութեան լարն էհնչեցնում, կռիւ, դիմադրութիւն, ազատութիւն է քարոզում։

Մի ուշագրաւ այլաբանութեան մէջ „Արծիւը“ իր հայրական խրատներն է ուղղում զէնքով ու զրահով պատած երիտասարդին.

. . . Զօրացի՛ր դու, հայկազուն քաջազէն երիտասարդ, ամենեին մի՛ վախենար, ամենեին մի՛ վհատիր, գնա՛ քու ճամբադ, ուսկից որ քու առաքին նախնիքներդ անցած են քեզի պէս թշնամիներուն հետը կռուելով... Վազէ դէպի Այրարատ... Վարդան Աւարայրի դաշտէն քեզ խրախոյս կը կարդայ... Սի՛ր առ... Թո՛ղ քաջ Վարդանայ սուրբ արիւնին կարմիր կաթիլներ, որ ճամբուդ վրայ թափուած կերևան ծաղկի պէս՝ քու աչքիդ իբրև ուղեցոյց նշան ըլլան. բարո՛վ երթաս...

***

Ալիշան ողբում է և երգում տարածութեան վրայ, հայրենիքից հազարաւոր մղոններ հեռու, առանց երբէք ոտք դնելու իր երգած սարերի ու ձորերի մէջ, իր ցեղային միջավայրում,—Խրիմեան անձամբ ապրում է և ողբում հայրենի թշուառ, այլանդակած իրականութիւնը։

Ալիշան գրում է վենետիկեան ազատ ջրերից—Խրիմեան հնչեցնում է իր շեփորը բուն իսկ դժոխքի մէջ, շրջապատուած ամեն կողմից ոսոխներով։

Ալիշան համակւել է ըմբոստութեամբ գլխաւորապէս արևմտեան յեղափոխութիւնների ազդեցութեան տակ,—Խրիմեան դարձել է յեղափոխական իր ցեղի կրած անլուր բռնութիւնների և տառապանքի հանդէպ։

Ալիշան հայոց ազգի բանաստեղծն է, նրա դիւթիչ, պերճախօս մարգարէն, նրա խանդավառ, անզուգական աշուղը։ Խրիմեան թէ աշուղ է, թէ յեղափոխական գործիչ, թէ երազող և թէ մանաւանդ ձգտող, իրագործող... Միանգամայն մ ի տ ք, կ ա մ ք և ճ ի գ։

Եւ ի՞նչ հոյակապ ճ ի գ... Ի՞նչ ահռելի դժուարութիւններ՝ իր յղացած ծրագիրների իրագործման ճամբու վրայ... Ո՞վ կարող է հաշուել այն բոլոր խոչընդոտները, չափել այն բոլոր վտանգները, զրկանքներն ու տառապանքը, որոնք ուղեկցում էին Հայոց Հայրիկին այդ տատասկոտ ուղիի վրայ, երբ նա խիզախում էր յիսունական թուականներին տպարան ու մամուլ հաստատել հայկական լեռնադաշտում *)։

Մեր նպատակից դուրս է՝ նկարագրել մանրամասնօրէն այդ աննման էպոպէան, որ այն ժամանակւայ թիւրքահայ իրականութեան մէջ մի կատաբեալ յայտնութիւն

*) 1855 թուականին։

էր... Մանրամասն կը գրի այն՝ երբ գալոց օբ'եկտիվ պատմագիրը կը գրէ մեր ազգային վերածնութեան բազմահատոր պատմութիւնը։ Այդ ժամանակը չի հասել դեռ։ Խրիմեանի շուրջն անգամ՝ հայ քննադատական միտքը չի գործում տակաւին ցանկալի պաղարիւնութեամբ ու ներդաշնակութեամբ։ Դեռ երէկ էր, որ ոմանք — հայ մամուլի Արշակաւանից — մօտենալով հսկային իրենց գաճաճ չափերով, փորձում էին տապալել նրան և իսպառ խաւարեցնել վաթսուն տարուայ անվկանդ ճիգերով վաստակած խրիմեանական լուսապսակը *)...

***

Կարլայլի խօսքը—թէ ազգերի պատմութիւնը էապէս պատմութիւնն է մեծ մարդկանց—ճիշտ է մասամբ։ Մեծ մարդիկ, որ յայտնել ու գործել են պատմութեան մրրկածուփ թատրի վրայ, մարմնացնում են որոշ մտքեր, բաղձանքներ, իդէալներ, որ յատուկ են ազգի որոշ պատմական շրջանին։ Առաջնորդ, ներշնչող, գուշակող, մարգարէ՝ նրանք մի մի փարոս են, լոյսի ու ջերմութեան մի մի աղբիւր, որ գալիս են գէթ մասամբ ցրելու շրջապատող աղջամուղջը, տաքացնում, լուսաւորում են սովորական մահկանացուների պաղ ու իներտ զանգուածները, բնազդով ու արտակարգ հոտառութեամբ ըմբռնում են ժամանակի պահանջները և առնական արիութեամբ բարձրացնում են դրօշակը յանուն այդ պահանջների։

Օրի, Մխիթար, Ներսէս Աշտարակեցի, Ալիշան, Խրիմեան, Նալբանդեան, Րաֆֆի, Պատկանեան, Արծրունի և այլն—այդ յուսատու փարոսներից են, լոյսի ու ջերմութեան այդ կենդանի աղբիւրներից, որ ժայթքում են հեռուէն-հեռու, ժամանակ առ ժամանակ կեանքի գորշ, արևակէզ անապատում, ազգային պատմութեան միապաղաղ տարածութեան վրայ, կոթողում են իրենց անձով ու գործով այդ պատմութեան դրուագները, տարածում են իրենց շուրջը ոգևորութիւն ու եռանդ և դնում են իրենց ձեռքով խարիսխները հայկական կառուցուածքի... Նրանց էութիւնն ըմբռնելով մենք դիւրութեամբ կըմբռնէինք և ազգային վերածնութեան պատմութիւնը, նրա ճշմարիտ իմաստը։

Խրիմեանը գուցէ ամենից օժտուածն էր, գուցէ ամենից ինքնատիպը այդ գեղեցիկ շարանի մէջ...

Այսօր ևս դեռ զարմանքով հարց էք տալիս, թէ ինչպէ՞ս տաճկահայոց ճխլուած ու տափակ միջավայրում — և այն էլ այն ժամանակ — կարողացաւ ծնունդ առնել... այդ լեռը։ Նա դուրս ժայթքեց ցեղի խորունկ ու վշտառատ ծալքերից, որպէս կեանքի ու կորովի հրաբխային մի բեկոր, որ պիտի գար շնչաւորելու գաւառական ընդհանուր մեռելութիւնը, ստրկութեան ու մեղկութեան, մտաւոր ու բարոյական անդամալուծման մթնոլորտը։ Առանց կանոնաւոր ուսման ու գիտութեան — բայց ահագին բնատուր իմացականութեամբ։ Առանց բարոյական դաստիարակութեան, բայց առողջ բարոյական բնազդով, նախնական քրիստոնեայի ջինջ առաքինութիւններով։

Նախնական քրիստոնեայի...

Եւ, սակայն, Վասպուրականի Արծիւը այստեղ ևս ցոյց է տալիս իր օրիգինալ դէմքը, իր անվրէպ բնազդը և իր նուրբ հոտառութիւնը։ Նա մերժում է այդ նախնի քրիստոնէի համակերպութեան քարոզը, մերժում է բոլոր ծոյլ, մեղկարար, կրաւորական հաւատալիները, չարին չարով չպատասխանելու անիծապարտ սկզբունքը, որ գլորել էր հայութիւնը ստրկութեան ու ապականութեան տիղմի մէջ, որ սպառնում էր վերջնականապէս կործանել այն։ Նա մերժում է այդ ստրկական պաշտամունքները, ըմբոստանում է հայ կղերի, հայ աշխարհի դարաւոր ռուտինի դէմ, և ժողովրդի արիւնը ծծող բռնակալ ուժերի հանդէպ՝ քարոզում է զէնք, դիմադրութիւն, ինքնապաշտպանութիւն...

Այդտեղ էր Խրիմեանի անձնաւորութեան մեծութիւնն ու հմայքը, նրա պատմական մեծագոյն արժէքներից մինը։ Այդ հանգամանքն է, ի միջի այլոց, որ տալիս է անզուգական ծերունիին Թիւրքահայոց „առաջին յեղափոխականի“ տիտղոսը։

Քրիստոնեայ—այո։ Վաղեմի քրիստոնէութիւնը հրահանգում էր պարզութիւն, բարութիւն, ալտրուիզմ, ժողովրդասիրութիւն ու մարդասիրութիւն։ Այդ բոլոր „հովուերգական առաքինութիւնները“ մենք գտնում ենք վանեցի առաքեալի մէջ և գտնում ենք մի տեսակ բնածին, ինքնաբուխ, անարեստ այսպէս ասած, անգիտակից վիճակի մէջ... Հինգու ոչինչ չունէին այլասիրական, ալտրուիստական նրա գեղեցիկ ժեստերը, „հնարք“ չէր, „փոլիթիկ“ չէր այն վեհանձն բարութիւնը, որ թելադրում էր սովի, տագնապի վայրկեաններին մոռանալ դարևոր ատելութիւնը և կերակրել ու խնամել հայի հետ անխտիր քիւրդին ու թիւրքին...

Քրիստոնեայ — այո։ Բայց քարոզելով հանդերձ Յիսուսեան աւետարանը, հոչակելով դրա հետ գիտութեան ու լոյսի անհրաժեշտութիւնը, յորդորելով ժողովրդին դպրոց բանալ, գիրք կարդալ, յորդորելով բաց անել ամեն տեսակ կուլտուրական հիմնարկութիւններ, մեծ վարպետը համոզուած էր և ձգտում էր համոզել ուրիշներին ևս, իր խոպան, ստրկամիտ հայրենակիցներին, որ այդ բոլոր խաղաղ ճիգերը բաւական չեն, որ այդ բոլոր կուլտուրական հիմնարկութիւնները գործի

*) Գեղեցիկ է—թէև թերի—„L'Apotre de l'Arménie Contemporaine“ ներբողական-յօդուածը, որ պ. Ա. Զոպանեան հրատարակել է Mercure de France հանդէսի մէջ 1896 թուականին։

կէսն են, որ միմիայն նրանցով չի պահպանուի ազգի շէնքը, որ մտաւոր վերածնութեանը պէտք է անպայման շաղկապուի ռազմական վերածնութիւնը...

Կո՛ւ, մաքառում...

Սթափւում էր կամաց-կամաց հայ աշխարհը և Խրիմեանի անձնաւորութեան մէջ կենտրոնանում էին մարտիրոս ժողովրդի բոլոր աղօտ յոյսերն ու տենչանքները, խուլ ու եռուն դժգոհութիւններն ու բողոքները։ Պարզ, հմտեստ վեղարաւորը դառնում է միջնակետ այդ սթափւող և մաքառող աշխարհի։

Կուի, մաքառման մէջ սկսւում է և վերջանում հրսկայական կարիերը, կուով, անվհատ մաքառումով բարձրանում է արագ արագ երկայնաձիգ սանդուղքի վրայ, հասնում է մինչև փառքի ու հմայքի ծայրագոյն աստիճանները... Մասսան բերկրանքի ու երկիւղած յափշտակութեան մէջ ծափահարում է և խունկ ծխում իր „Հայրիկին“... Հիացում, երկրպագութիւն, պաշտամունք, զառանցանք, առասպելներ շնաշխարհիկ կուռքի շուրջը... Հալածանք, դաւեր, ատամների կրճատոց՝ թշնամիների բանակից, թէ հարազատ և թէ օտար, բռնաւոր թշնամիներ... Ամբողջ կեանքը՝ անդուլ պայքար յաճախակի պարտութիւններով, երբեմն մինչև կատարեալ խորտակում, յուսահատութիւն, արցունք ու հառաչանք... Սակայն անկումը ժամանակաւոր է, առնական կորովը չի հատնում, պայքարի տենդը շարունակւում է մինչև կեանքի վերջալոյսը, երբ Էջմիածնի պատերի տակ, համազգային մի ծանր վտանգի հանդէպ, պառաւ արծիւը վերստին թափահարեց թևերը, ձայնակցեց իր յեղափոխական զաւակներին, ընդ առաջ գնաց հայ մարտական կազմակերպութեան ահազանգին ու յորդորներին և ծառացաւ մի ահարկու բռնապետութեան դէմ։

***

Վերադառնանք, սակայն—Վարագ։

„Արծուի Վասպուրականի“ն իր պատուաւոր տեղն ունի հայ մամուլի և վերածնութեան պատմութեան մէջ։ Նա Խրիմեանի հրաբխային էութեան մի մասն է, նրա ահագին և բեղմնաւոր գործունէութեան պատկառելի մի յուշարձանը.

Աշխատակցում էին հանդէսին մի խումբ աշակերտներ Վարդապետի հիմնած գիշերօթիկ դպրոցից—մի խումբ գաղափարական „Արծուիկներ“, որ Խրիմեան բերել էր տուել Հայաստանի զանազան ծայրերից և որոնք ապրում ու աճում էին իրենց պաշտած վարդապետի շունչով, դաստիարակւում, ազնւանում էին նրա մաքուր, գաղափարական մթնոլորտում, Նրա թովիչ ընկերութեան մէջ... Սրուանձտեան, Թորոսմաքեան և ուրիշներ, բոլորն էլ ապագայ հայ ժողովրդական գործիչներ, վարժապետ, քարոզիչ կամ գրող։ Աշխատակցում էր և Բաֆֆին — հայ նորագոյն շարժումների ամենազօրեղ ներշնչողն ու պատրաստողը—որ տակաւին սկսնակ, ապրեց մի քանի ամիս Վարագի ընկերութեան մէջ և յետագայում գրեց իր խանգաւառ ներբողը „Արծուի“ ու վանքի մասին։

Գրում են „սանիկները“ արձակ և ոտանաւոր, յաճախ միամիտ աշակերտական թոթովանքներ, բայց վառուած մի կատաղի հայրենասիրական շունչով։ Սո՛ւգ է և հառաչանք ամենուրեք... Երիտասարդ գրողներն էս, հետևելով իրենց վարպետին, նախ ձգտում են հայրենիքի անօրինակ թշուառութիւնները ողբալով, շարժել, զգայնացնել կարծրացած սրտերը և ապա միայն՝ փոթորկել նրանց՝ ըմբոստացման հուժկու յորդորներով...

Արիւն ընդ հող միշտ շաղախի, երկիր ինքնին վա՛յ գոչէ,
Քարինք պայթեալ ազատակեն, սիրտ երկիւղած ոչ մնաց.
Ո՞ւր են չքնաղ մեծ ապարանք պերճ աշխարհին մեր Հայոց,
Խապտ քանդեալ կործանեցան, բնակիչք նոցին ոչ մնաց *)...

Ահա և Անիի սրտաճմլիկ ողբը՝

Երբեմն էի ես շատ անուան
Հայոց քաղաք թագաւորեալ
Այժմ աւեր հիմնայատակ
Նստեալ կուլամ ես միայնակ...

Բայց մի օր...

Գան ժողովին ազգ միաբան
Քո հաստատեն քարինք անկեան
Գեղեցկանաս շատ անուան
Ցապա մի՛ լար սիրուն Անի,
Անի, Անի, իմ ջան Անի...

Ողբից յետոյ—միշտ խրախոյս... Որովհետև լոկ խրոխտաձայն ու յուսակտուր վայո՛ցը անարժան էին Վարագի հպարտ արծուիկներին։ Հայրենիքի փառքերը սգալով հանդերձ՝ նրանք հետզհետէ—այդ „փառքերի“ զօրութեամբ իսկ (թէկուզ մարած, անդառնալի)—տոգորւում են ազգային հպարտութեան զգացումով, տարւում են երբեմնապէս գոռող ու վէս նացիոնալիզմի հովերով, շարադրում են չափազանցրած ու փքուռոյց ներբողներ՝ հին հայկական մեծութիւններին.

Հսկայ հրզօր գեղապատշաճ
Հայկ մեր նախնին քաջարանց
Հաստաբազուկ, կորովաձիգ
Ցիեզերաց վեհապանծ
. . . . . .
Արծուի ահեղ սուսառնաթև
Աշխարհակալդ Արտաշէս,
Յասիայէ ի Յ'եւրոպայ
Սլացեալ անցեր փութապէս
Դրով և ցամաք կղզիք բազումք
Եղեն ծառայք կամ հրկեզ
. . . . . .
Մեծդ Տիգրան տեգ հրընկէց
Եղջիւր փառաց անասան,
Անյաղթ զօրուն հռովմէական
Անպարտելի ախոյեան
Մինչ ց'եՐբ կայցես հինէն անտես
Կարօտ եմ քոյդ տեսութեան **)...

*) „Արծուի Վասպուրականի“, դեկտեմբեր 1855։
**) „Արծ. Վասպ.“, մայիս 1859։

Թող լինի դա մի ցնորք, մի վարդագոյն զառանցանք՝ խակ ու շօվէն նացիօնալիզմի... Բայց կայ միւս զգացումը, որ խորապէս օրինաւոր էր ու բանաւոր, որ ունէր իր գոյութեան ողբերգական պատճառները. դա Վարագեան քարոզիչների ըմբոստութեան ոգին էր, հիւսուած մի անհնարին գարշանքի զգացման հետ, որ նրանք տածում էին դէպի տիրող ռէժիմը և նրա ստեղծած կացութիւնը Հայաստանում։

Ի՞նչ էր սակայն այդ ռէժիմն ու կացութիւնը, ինչո՞վ էր նա սարսափելի և նողկալի, ի՞նչ էր հայ զանգուածի թշուառութեան ու տառապանքի աղբիւրը—վաթսունական թուականների սկզբներում, երբ ռէֆօրմի և ազատութեան հովն էր անցնում ամբողջ օսմանեան երկրի վրայից, եւրոպական ճնշման տակ, երբ սուլթանը պատրաստւում էր վեհանձնօրէն պարգևելու „Սահմանադրութիւնը“ իր սիրելի հայ ազգին և երբ Պոլսի հայութիւնը հրճւանքի ու խանդավառութեան մէջ տօնում էր „նոր դարագլուխը“։ Ա՜հ, գտնւեցին վերջին դժբախտ քսանամեակում հայ գրողներ, որոնք հանդէպ ներկայի՝ ներբողեցին, ցաւով ու ափսոսանքով, „հին բարի ժամանակը“, նախայեղափոխական շրջանի բարիքները, թիւրքական ռէժիմի քաղցրութիւնը, հայաստանցուն մեղմ ու բարօր վիճակը...

Թո՞ղ նրանք կարդան ոչ թէ „Մասիսն“ ու „Հայաստանը“, այլ „Արծուի Վասպուրականի“։ Թող նրանք կարդան Սրուանձտեանցի այս ցնցող նկարագրութիւնը հայկական գաւառների ամենօրեայ կացութեան, այս անպաճոյճ տողերը, ուր տեսնում էք մի ահաւոր ու հրեշաւոր դրամայի ներկայացում, մի դիւային չարչարանքի, որին մատնւած էր միլիոնաւոր ժողովուրդը և որի մէջ նա, անյոյս, շղթայակիր, գալարւում էր ու մեռնում ամեն օր և ամեն ժամ... Այդ դժոխքի զարհուրանքը դեռ աճեց այնուհետև, ծանրացաւ տարէց տարի—չերքէզների ու այլ իսլամ գաղթականների ներարշաւով, բալկանեան յարաճուն շարժումներով, Թիւրքիոյ ասիական սպառումով, տուրքերի սանձարձակ ամբարումով—և հասաւ իր աւերիչ գագաթնակէտին ռուս-Թրքական պատերազմից յետոյ։

Ականջ դնենք Սրուանձտեանին. նա տալիս է պատկերներ հայ շինական կեանքից.

Կը տեսնա՞ս, այն հրապարակի կշտից քանի հատ զօրքեր կ'անցնին և նոցա մէջ շրջապատւած մի ողորմելի պառաւ և մի երիտասարդ շինական հայ կին... Այն ի՞նչ ձայն էր, ի՞նչ ճիչ էր, որ յանկարծ լսեցաւ... Հարա՞ծ էր, որ տէրն այն կնոջ, պարտուց համար բռնած կը տանին դատել ու տանջել...

Մի՞թէ կ'ամուսնանան և սոքա. այդ ի՞նչ սարսափելի հարսանիք։ Այդպիսի վշտալի սրտերը տակաւին սէ՞ր կը զգան։ Զարհուրելի վայրկեաններ տակաւին ուրախութի՞ւն կը կրեն...

Թշուառութիւն է մանկան իւր ծնած բուպէից մինչև գեռ բեզմանը...

Թշուառ է այդ մանուկը, ասում է Սր., ոչ թէ նրա համար, որ չոր հողի վրայ է հանգչում, գարի հաց ուտող մօր կաթն է ծծում, որ զրկւած է ամեն փափկութիւնից ու քնքշութիւնից, այլ ահա նրա թշուառութեան պատճառները։ Հէնց որ աշխարհ է գալիս, հէնց որ ծնողների դառնացած դէմքերը մի փոքր սկսում են ժպտալ՝

Ահա բռնութեանց ձայներ կը խշխշան գեղի հրապարակը և գալով գալով մինչև նոցա շեմը կը կոխեն... Իսկոյն փոխւեցաւ տեսարան։ Կամ տուրք ժողվողն է կամ պարտատերը, կամ մի նոր տուկանք (տալեան), կամ քիւրդեր եկան գբշլաղ (վրանաբնակ քիւրդեր աշնան կուգան հայոց գիւղեր ձմերելու և հայեր ամեն տարի կը հոգան նոցա համար ամեն պիտոյքն ու կարիք)։

Լա՜ց մանուկ, թող լայ խղճալի մանուկն։ Գնաց հայրը, գնաց մայրը։ Հայրը այն կողմ ազազակ կը հանէ. տուրք կը պահանջեն, հարւած կընդունի, վանդի փող չունի... Վա՜յ նրա գլխուն... Կինը դրան ետև կայնած, սիրտը դէպի նուրածին, և աչքերը դէպի ամուսին այս աղէտալի տեսարանին ու ցաւին յառած կը հեծէր, հեծեծէր. այժմ իսպառ թողուց մանուկը և թռաւ ու անկաւ մէջ այն աղէտից, յորմէ և իրեն բաժին ինկաւ, թիկունքն ու մէջքը հարւածեցին, որ եթէ քանի մ'օր յառաջ լինէր, պիտի վիժէր իւր զաւակը։ Ահա ծնողք մանկան, ահա մանուկ ծնողաց...

Անցաւ այդ աղէտը—մի ուրիշն եկաւ.

Դարձան վերջապէս ծնողք... կը հանգչէին սիրտերը կամաց-կամաց, թմրեցան կապուտակ երակները, որ ուռած էին ծեծւելէն... և ահա մի ևս վայրկեան դառնութեան։ Գեղի գզիրը (մեհլէ մուխթարի) չորս կամ հինգ գաղանակերպ քիւրդեր ետևը ձգած մտան տուն։ Արդէն գեղի մէջ փրթած փոթորիկէն, գոռում գոչումէն... գաւազաններու, հայհոյանքներու և թշնամաց ձայներէն յայտնի էր, որ բարբարոսները ձմերելու (գշլաղ) եկած էին գեղ, որ Ռէհին կը ծեծէին, գզրին կը հայհոյէին, միւսի վրայ սուր ու զէնք կը քաշէին, վերջապէս բաժին եղաւ գեղի վրայ և այս 4 կամ հինգ էլ այս տան բաժինն էր։

Եւ Սրուանձտեան նկարագրում է տան իրարանցումը.

Ամէնքը տաքի են, սպառաւորելու քիւրդերին. — մանուկ, աղջիկ անգամ, իբրև գերիներ... Նոցա կօշիկները հանել և սրբել, նոցա զգեստները թօթափել, պահել։ Այն կողմը խեղճ կնիկ թոնիր կը վառէ, որպէս զի գշլաղներ տաքնան. աղջիկներ, հարսներ կերակուր կը պատրաստեն, իսկ երիկ մարդիկ կայք ու ծանրութիւնները ներս կը կրեն, ձիեր ու տաւարներ կը տեղաւորեն։

Երեխան էն կողմը խեղճ կրակ կուլայ...

Այստեղ միայն հառաչանք և ոչ այլ ինչ...

Արքունի տասանորդ ստացող մի նոր կերպ տէր նա գեղի մէջ, եկած օրէն մինչև գնաց ամեն օր եղ ու ձուածեղ, փոխինդ ու գաթայ, սեր ու կարագ իր սեղանին վերայ պատրաստ պիտի գտնայ։ Ապա թէ ոչ, փայտ ձեռքը, զէնք վրան... Հայհոյանք, ոպառնալիք կը թափէ, մինչև փամաթուխ ոտները, ծառայ գառնաս, հող գառնաս, շուն գառնաս, հագիւ տան մէջնորդով ու մէկ ոչխարով քեզ հետ հաշտւի...

Ներքին Քիւրդիստանու հայեր գրեթէ ամենքն էլ այս վիճակն ընտրած են. թողուլ և գաղթել։

Ահա և զապաթիէն, խարջ հաւաքողը.

Իջաւ զապթիէն իւր ձիուց բարևեց ու գնաց Ռէսի տուն. ուզածը կերաւ ապա սկսաւ առաջարկել. պառաւ-կնիկներ, մէկին կը հարկադրէին չորս մարդու տուրք տալ, պատճառ որ սորա չորս որդիքը Ստամբուլ են. բողոքեց թշուառ պառաւը, թէ 1 տարի 4 ամիս է, որ իմ որդին օտարութեան մէջ մեռեր է, բայց ո՞վ էր լսող Ինքն ասաց, ինքը լացաւ...

Խնայէ՛ք մեզի...

— Չէ, չէ, անկարելի է, փարա՛յ, փարա՛յ։ Այնտեղ կանչեցին և քանի մը նորահարսներ, որոնցմէ կը պահանջէին

իրենց երիկներու խարջը. խղճալիք, պառաւներու ետև կայնած, ձեռքով ու գլխով իրենց անճարութիւնը յայտնեցին, բայց զապտիէն գոռալով ու երկիւղ տալով պատուիրեց, որ պարաք անեն։ Եւ գնացին նոքա դողալով ու լալով *)...

Այո՛, „այստեղ միայն՝ լաց ու հառաչանք—կրկնենք „Արծուի“ խօսքերը։ Ոչ մի ժպիտ ուրախութեան, ոչ մի յոյս... Դժոխքն է... *Lasciate ogni speranza voi chi entrate!*...

Ինչպէ՞ս չխռովուէր հայ փոքրաթիւ և գիտակից երիտասարդների սիրտը և չլցուէր ատելութեամբ դէպի բութ ու բարբարոս ռէժիմը, որ արորել էր վայրագօրէն մարդկային կեանք ու պատիւ, հասցրել էր միլիոնաւոր զանգուածները անասնական, իլոտային կացութեան։

Եւ ահա „Արծուի Վասպուրական“ի մէջ դժգոհութիւնը խտանալով, միշտ աւելի և աւելի գունաւորւում է ու դուրս պոռթկում մի շարք յօդուածների ու տեսնդենցեօզ, խիստ թափանցիկ այլաբանութիւնների մէջ։ Ահաւասիկ մէկը դրանցից։ Վէճի են բռնուած փառասէրը և հայրենասէրը. առաջինը էգօիստ, նիւթապաշտ ու երկչոտ՝ աշխատում է հանել երկրորդին „մոլար ճանապարհէն“ և ասում է.

Ձեր հայրենասէր համարուած քաջ Վարդան չէ՞ր, որ իր ուժէն վեր գործի ձեռք դարնելով, հայոց անմեղ և անհամար երիտասարդներու արիւնով ներկել տուաւ Արտաղու դաշտը ու բոլոր Հայաստան աշխարհ գերել տալու պատճառ եղաւ։

Հայրենասէրը պատասխանում է.

Ազգիս բարելաւութեան համար իմ բոլոր գոյքն ալ, կեանքս ալ կը զոհեմ... Վարդանայ տանջուած անտանելի դժոխք ինձ համար ընտրելի է, քան Վասակայ հանգիստ արքայութիւնը... Եթէ հայոց անմեղ ու անհամար երիտասարդաց արիւնով չ՚ողողուէր Հայաստանի դաշտերը, ո՞ւր տեղէն պիտի բուսանէր Հայութեան ազնիւ բողբոջներ... („Արծ. Վասպ.“ 1862—63, թիւ 2)։

Ցեղափոխականի և հակայեղափոխականի վէճն է, որ գրեթէ նոյնութեամբ մենք տեսնում ենք մեր շարժման նորագոյն շրջանի մէջ։ Եւ ո՞րքան ճիշտ ըմբռնումն ապստամբութեան գաղափարի էութեան, նրա բարձրացնող, ազնուացնող առաքելութեան։ Այդ դիալոգն ևս պատկանում է Վարագի „Արծուիկներից“ մէկի գրչին։

Մի ուրիշ տեղ „Արծուի“ը պարզապէս ապստամբութիւն է քարոզում անհանդուրժելի լծի դէմ։ Նոյն Սրուանձտեանն է. հերի՞ք է լանք, ասում է նոքա՞ արիանա՞նք և կուենք.

Չի՛ լանք, եղբայրներ, ափսոս են մեր աչքեր. թող լան հին գլուխներ։

Էն դեհ մի կռիւ կայ. կը լսէք ահաւոր ձայներ, ձայն Արևմուտքից, ձայն Հիւսիսից... մի՛, մի՛ սարսափինք, նոքա մեզ քաջութիւն թող տան... մենք հաւ չենք, մենք էլ մարդ ու մարդու զաւակ ենք...

Ազգի համա՞ր պիտի աշխատիս. էլ ուրեմն դո՞ւ քեզ համար չես, քո ծնողաց համար չես... Ազգին ես... Կ՚ընթանաս արիաբար, հսկայ հսկայ, առաջուցդ դժուարինք, վիշտք ու նախատինքներ կոխելով... Կոխէ ու կոխվիր, զա՞րկ ու զարկուիր, ինկար, վեր կանգնիր, մեռնիս էլ՝ կը յաղթես... Նահատա՞կ... Ի՞նչ հոգեղէն անուն, ի՞նչ երկնային կոչում... Անուն, որով ազգեր կենդանացած են...

Աշխատինք ուրեմն... Ցուսահատութիւն միայն չունենանք... Հայութիւնը... կարծես դերութեան վիճակեալ մի անսթ է... Ա՜ն, այդ իսկ է, գիտես. էլ մի՛, էլ մի՛ յաւելուր... Բայց ինչի՞ կուլաս դորա վերայ. չ՚ողբանք, չը յուսահատինք... Արտասուք սրբենք և ոչ թէ արտասուք թափենք. ձեռք ու ոտք շարժենք և ոչ թալկանանք մեռելի պէս վեր ինկինք։ Լացողներ լացին ու անցան գնացին. հիներն էին նոքա. մեք նորութեամբ շարժինք...

Արարածոց դիւանագիրը ի՞նչ կը գրէ արդեօք հայոց գործքերէն. միշտ ո՞ղբ, հոսա՞նք արտասուաց, դառնութիւն սրտի՞ց, գերութի՞ւն վիճակի... ա՞յս պիտի կարդան տիեզերաց տարեգրութեան մէջ հայոց գործքերը, և ևս տառնիներորդ դարուս հայոց գործքերը..

Այո և դու, կորովիդ հայկական երիտասարդութիւն, ընդոտս ի վեր կը խոյանաս պանաս, թևերուդ վրայ աղատականութիւն բևեռած, նահատակութեան շաւղով. իրաւ ճանապարհը դա է... Բայց մէկ կողմից խառնակ է օդ, մրրկոտ է երկինք և միւս կողմից չուան և լարը ձգած են սրոդայի ոտիցդ. ի՞նչ, ուրեմն, դադարի՞ր կամէի ասել քեզ. ո՛չ, ո՛չ, դու ընթացիր, բայց ծանր ծանր, ինչպէս արի, նոյնպէս զգոյշ *)...

Հեռո՞ւ յուսահատութիւնը... Հները լացին—բա՜ւ է, մենք շարժի՛նք... Նայեցէք դէպի Արևմուտք և Հիւսիս. այնտեղ կռիւ կայ,—կռիւ ընդդէմ բռնապետութեան, կռիւ յանուն մարդկային իրաւունքների... Մենք էլ մարդ ենք, հետևե՞նք նրանց օրինակին, արիանանք, ոտքի՝ ելնենք, զարկե՞նք և զարկուի՞նք, վայր ընկնինք և նորէն բարձրանանք, գրկենք նահատակութեան ազատարար դրօշը... Ոտքի՛ ելնենք, թէպէտ և... „խառնակ է օդ և մրրկոտ է երկինք“...

Այդպէս էին քարոզում Բաֆֆիից, Պատկանեանից շատ առաջ, իրենց արձակի ու ոտանաւորի մէջ, իրենց ինտիմ, ընտանեկան միջավայրում՝ Վարագի երիտասարդ պառնասեանները, յեղափոխական այդ ինքնատիպ մարգարէների փաղանգը։

Եւ Խրիմեան հպարտ էր իր անած, դաստիարակած Արծուիկներով, Խրիմեանի գաղափարներն էին նրանք շեփորում՝ նորընծայական մի սրբազան խանդավառութեամբ, Խրիմեանի Մուսան էր, որ կոչում էր բարձրաձայն, սթափեցուցիչ զօրանշներով հեգ ու աւեր Հայաստանում, որ բախում էր մոլեգնօրէն ազատութեան քրմի դուռը, որ ուզում էր բողբի տարերային յորձանքի մէջ հալեցնել դարաւոր շղթաները, տիտանեան մի հարուածով ջախջախել բռնապետութեան հիդրան։ Խրիմեանի Մուսան էր — ցաւոտ, անմխիթար, բայց և խ!զախ, անվեհեր — որ եկել էր բուն իսկ հայրենիքի մէջ, նրա խրոխտ ու սգաւոր բարձունքներում ծանուցանելու մի վսեմ գաղափար,—հայկական ապստամբութեան գաղափարը—որ այնուհետև

*) „Արծուի Վասպ., 1862 թիւ 3։

*) „Արծուի Վասպ.“, Շրջան 1862—63 թ., թիւ 1։

պիտի աճէր հետզհետէ սուբ'եկտիվ մտքի և օբ'եկտիվ իրականութեան կրկնակի մղումով, պիտի երթար կամաց-կամաց նուաճելու սրտերն ու ուղեղները, պիտի երթար պաշարելու „Զայն տուր ո՞վ ծովակ"ի խորհրդաւոր հեղինակին, պիտի գերէր նրա ամբողջ էութիւնը, արտադրելով մի շարք հոյաշունչ հատորներ, պիտի ստեղծէր պարզ, անյայտ փայլուկցի երիտասարդից — Ռաֆֆի ին... որպէս զի նրա միջոցով, նրա հրեղէն քուրայի մէջ բոցավառէր սերունդներին և ծնունդ տար յետագայում այն առնական ու յուզիչ վիպերգութեան, կարիճների այն ցասկոտ ու վրիժառու լեգէօններին, որ քսան տարի շարունակ թնդացրին նոյն հարազատ լեռները գիւցազնական մարտակոչով—„Մա՜հ կամ Ազատութիւն"...

Նա պիտի պայթէ՛ր—այդ եզակի ու եղերական գիւցազնամարտը — „խառնակ օդում և մրրկոտ երկնքի տակ", բայց պիտի գար, „Արծուի Վասպուրականի"ի մարգարէական արտայայտութեամբ, բարոյապէս վերածնելու անարգուած, ոանահարուած համայնքը, սրբելու նրա ճակատից ստրկութեան արատը և արցունքոտ, արիւնաներկ հողի վրայ „բուսցնելու ՆՈՐ ՀԱՅՈՒՄԹԵԱՆ ազնուագոյն բողբոջները"...

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԱԼՊԱՆԻԱ

Տասնուհինգերորդ դարուն, երբ բիւզանդական մաշած կայսրութեան վերջին բեկորները իսպառ կորսուեցան Մոռացումի ովկէանին մէջ և Օսմանի զաւակներուն հրաշունչ հորդաները վաստակաբեկ կանգ առին Արևելքը Արևմուտքին միացնող հոյաշէն երկիրներուն և անոնց ազգի ազգի բնակչութեանց կուրծքին վրայ, իրենց հիմնական մտահոգութիւնը եղաւ կազմակերպիլ և իրենց ձեռքին տակ ինկած մարդկային զանգուածներուն մէջէն դուրս բերել ն ո ր ա զ գ մը։

Օսմանի զաւակներուն այդ մտահոգութիւնը՝ ծնած 1453 մայիս 29-ի օրը, Մուհամէտ II-ի յաղթական մուտքով Այա-Սոֆիան Մայր եկեղեցիէն ներս՝ դեռ կապրի և ինչ որ կը կոչուի օսմանեան պատմութիւն այդ դարաւոր մտահոգութեան յաջող և անյաջող փուլերուն շղթայաւորումն է համակ տենդ, արտասուք և արիւն։

Զարկին անոնք հաւատքները հաւատքներուն, լեզուները լեզուներուն, բարքերը բարքերուն և գոյացուցին զարհուրելի քաոսը, որուն մէջէն նման նոր ստեղծագործութեան մը մարմին պիտի առնէր իրենց երազին իրականացումը... Բայց պատրա՞նք. պատմութիւնն ալ ունէր իր պատճառները և օրէնքները գրանիդեայ...

Տրորումը եղաւ միայն ժամանակաւոր և նուաճող բարբարոսներուն խաւարամտութիւնը տեսաւ շուտով ապշահար, որ այն քաոսին մէջէն որ պիտի երկնէր իր ըղձացած միաձոյլ ազգը, վերածնան ընդհակառակը անոնք, որոնք չէին ուզեր մեռնիլ... Ցունաստան, Սերպիա, Սև լեռ, Պուլկարիա, կարգաւ, նոր ոգևորութեամբ ու նոր տենչերով եկան գրաւելու իրենց դիրքը քաղաքակրթուած ազգերու արէոպագին մէջ։

Պատմութեան այս աշխատանքը դեռ կը շարունակուի և պողպատեայ յամառութիւնը անոնց, որոնք ծառայեցին չարին և ուզեցին իրենք զիրենք հարկադրել անիրաւութեան ուժով կը շարունակէ հալիլ թափուղ արիւններու ջերմութենէն։ Ահա և Կրէտէն, Եպիրոսը, Մակեդոնիան երէկ սարուկ, տանջուած, այսօր ազատ կանգնած երջանկութեան ուղիին վրայ։ Ահա և Ալպանիան երէկ արիւնաներկ, տգէտ, մութ, անծանօթ, անգրագէտ, նախնական, գրեթէ վայրենաբարոյ, որ դուրս կուգայ նոյնպէս հռչակելու իր ապրելու իրաւունքը։

Ալպանիա՞.. Բայց ո՞ւր է այս երկիրը, ո՞րն է այս ժողովուրդը, ո՞վ է հետաքրքրուեր անոնցմով... Այո՛, այդպէս է եղեր միշտ Թիւրքիոյ մէջ։ Աւելի դժբախտ անկասկած, քան Հռոմի գերիները, օսմանեան կայսրութեան ճիրաններուն տակ ճնացած ազգութիւնները իրաւունք անգամ չեն ստացեր իրար տեսնելու, իրարու ծանօթանալու...

Ալպանիան, ինչպէս օսմանեան կայսրութեան բաղկացուցիչ բոլոր երկիրները, կորսնցուցած է իր աշխարհագրական ճշգրիտ սահմանները և այսօր որ այդ խնդիրը՝ երբեմն այնքան զուրկ շահեկանութենէ՝ ստացած է հրատապ կարևորութիւն, ամեն պարագայի մէջ միայն մօտաւոր լուծում մը պիտի կարողանայ ստանալ։ Մնաց որ ամենահեղինակաւոր աշխարագէտներու և պատմիչներու, ինչպէս Էտվրդ Կիպպլն, Բրիւզլն դը Լամարթինիէռ, ալպանագէտ Իասինդ Հէկար, դը Պուրկոն և այլն կարծիքներուն մէջ անգամ տարբերութիւններ կան այդ մասին։ Բայց մէկ կողմ թողլով վիճելի կէտերը, կարելի է ընդունիլ որ Ալպանիա 400 քիլոմէթր երկայնութեամբ և 120 քիլոմէտր լայնքով այն հողամասն է, որ կը տարածուի Պալքանեան թերակղզիին արևմտեան եզերքը Ադրէականի վրայ, Արդահ ծոցէն մինչև Շքոտրաի լճին հիւսիսային կողմը։

Ալպանիա, որ կը կոչուի նաև Սկիրբերիա, ալպաներէն սկիրբեր բառէն որ կը նշանակէ ժայռ, լեռնոտ երկիր մը՝ է բազմաթիւ գետերով ոռոգուած, ուր կը տիրէ նոյնպէս հարուստ ու գեղեցիկ բուսականութիւն մը։ Այդ բոլորին վրայ աւելցած գեղատեսիլ լիճեր, Սկանդար Բէկի հայրենիքին տուած են ակնապարար տեսարան մը, նման անոնց, որոնց առջև այնքան յափշտակութեամբ սովոր ենք կանգ առնել Զուիցերիոյ մէջ կամ Հայաստան ճամբորդելու ժամանակ։ Ալպանացւոց երկ-

բին այս սար ու ապառաժ կազմուածքը ազդած է բնականաբար նաև անոնց նկարագրին վրայ և չինած անոնցմէ անհանդարտ, կուսաբեր, գրեթէ արիւնաբարոյ հասարակութիւն մը, որ իր պատմութեան ամբողջ ընթացքին տէգն ու հրացանը աւելի է սիրեր քան արօրը, և հովուական սրինգը՝ աւելի քան ուսումը։

Ալպանացւոց ծագումը շատ հին է հարկաւ, բայց անծանօթ դժբախտաբար, շնորհիւ գիտական արժէք ներկայացնող աղբիւրներու չգոյութեան։ Ինչ որ յայտնի է և որու մասին կարելի է ըլլալ բացարձակօրէն անվերապահ, այն է թէ ալպանացիները ինքնուրոյն, autochtone,—ինքներկրեայ ազգ մըն են զիրենք շրջապատող բոլոր միւս ազգերուն մէջ և կը պատկանին Հնդ-եւրոպական ժողովուրդներու մեծ ընտանիքին։

Ալպանացիները երկար ատեն ինքնավար կեանքով ապրելէ յետոյ որոշ ժամանակ ինկան սերպ, բայց մանաւանդ պուլկար կայսրութեանց գերիշխանութեան տակ։ Իրենց քաղաքական կեանքը մինչև օսմանեան տիրապետութիւնը շատ մութ է և հիմնովին առասպելական։ Պուլկար, յոյն և սերպ, ինչպէս նաև հռոմէական պատմութիւնները քրքրելու ատեն միայն կարելի է հանդիպիլ ալպանացիներու մասին յիշատակութիւններու։ Ալպանացիները, իրենք, իրենց նախահայրերուն մէջ կը դասեն մինչև անգամ Մեծն Աղէքսանդրը, Արիստոտէլը և այլն, բայց անշուշտ այդօրինակ ձրի հաւաստիացումներու վրայ չէ կարելի կանգ առնել։

Քիչ շատ յայտնի ալպանական պատմութիւն մը կը սկսի ուրեմն 15-րդ դարէն միայն, օսմանեան փաշաներու արշաւանքներուն օրերէն ասդին։

Երբ սուլթան Մուրատ Ա.-ի և Բայազէտ Ա.-ի օրով թիւրքերը տեղաւորուեցան Բալկանեան թերակղզիին մէջ, իրենց ձեռքերը ազատ ունենալու համար՝ ի սպաս նոր աշխարհակալութեանց, Ալպանիան յանձնեցին ժամանակաւորապէս երեք վստահելի ընտանիքներու ղեկավարութեան՝ Քոմնէնէս, Թոքի և Քասթրիոթի, որոնցմէ վերջնոյն փայլուն մէկ շառաւիղը՝ Գէորգ՝ ծանօթ Սկանդար Բէկ անունով պիտի դներ քիչ յետոյ, սուլթան Մուրատ Բ.-ի օրով, առաջին հիմքերը ալպանական հայրենասիրութեան և պիտի դառնար մեծագոյն աղէտը նորահաստատ կայսրութեան։

Գէորգ Քասթրիոթա — Սկանդար Բէկ, — կարելի է ըսել իրապէս միակ լուսաւոր դէմքն է համալպանական որոշ կարևորութիւն ներկայացնող, այդ ժողովրդի մամբողջ պատմութեան ընթացքին, վեր կանգնած ամեն ցեղային ու ընտանեկան ընդհարումներէ և դարձած տեսակ մը „ազգային հերոս“, առարկայ ընդհանուր պաշտամունքի...

Ալպանական երգը կը պատմէ որ Սկանդար Բէկ այսպէս հրամայեց իր զաւկին նախ քան մեռնելը.

Իջիր ծովափ, այնտեղ կայ խաւար ու տխուր նոճի մը։ Կապէ ձիս այդ նոճիին և տարածէ դրօշս անոր վրայ ծովուն քամիներուն առջև, իսկ դրօշէս կախէ թուրս։ Անոր սայրին վրայ կանգնած է թիւրքերու արիւնը և մահը կը նիրհէ այնտեղ։ Սևաթոյր ծառին տակ մի՞թէ ռազմիկին զէնքերը կը մնան անխօս։ Երբ փչէ հիւսիսի կատաղի քամին, ձին պիտի խրինչէ, դրօշը պիտի ծածանի, սուրը պիտի հնչէ։ Թիւրքը պիտի լսէ այդ, և դողահար, ոտգոյն ու որտոտմ, պիտի նահանջէ մտածելով մահուան։

Սկարդար Բէկ ինը տարեկան եղած ժամանակ (1423) Մուրատ Բ.-ի արքունիքին մէջ ընդունուած էր իբրև պատանդ հօրը՝ Օհան Քասթրիոթա իշխանին՝ հաւատարմութեան և խլամացած էր։ Օհան Քասթրիոթայի մահէն յետոյ (1443) Սկանդար Բէկ, որուն թիւրքերը տուեր էին այդ անունը իր անստգիտ կտրիճութեան ու խելքին համար, զայն նմանցնելով Աղէքսանդր Մակեդոնացիին, փախաւ Մուրատ Բ.-ի ծառայութենէն և պարզեց ապստամբութեան դրօշ։ Այնուհետև Սկանդար Բէկ մօտ քառորդ դար սարսափի ու մտատանջութեան մէջ պահեց տիրապետողները, որոնք չկարողացան Ալպանիան վերջնապէս նուաճած նկատել, մինչև որ չանէացաւ հերոսը (1467)։

Եւ ճշտիւ Գէորգ Քասթրիոթայի մահէն յետոյ, ալպան ժողովուրդը՝ բոլորովին յուսակտուր՝ ուրիշ հնարաւորութիւն չունեցաւ իր գոյութիւնը պահպանելու համար, բայց եթէ նման բոլոր միւս օսմանեան լուծը իրենց վզին ստացող հասարակութիւններուն, դիմել արտագաղթի ու կրօնափոխութեան։

Գունդագունդ ալպանացիները նեռեցան մէկ կողմէ դէպի Իտալիոյ ասպրնչական հողը ու միւս կողմէ իսլամութեան գիրկը։ Եւ ալպանական ազգային արդէն այնքան թոյլ կապը ենթարկուեցաւ ամենադժնդակ փորձի մը։

Առտնին պայքարները, որոնք պահ մը դադար էին առեր ընդհանրական թշնամիին դիմադրելու անհրաժեշտութեան առջև, վերստին արծարծեցան առաւել քան երբէք կատաղի։ Եւ ցեղերը բաժան բաժան քաշուեցան իրենց կիրճերուն մէջ իւրաքանչիւրը ապրելու համար իր հասկացած կեանքով և պաշտպանելու համար իր սրբութիւններն ու աւանդութիւնները իր սեփական միջոցներով։

Հարաւային ալպանացիները, որոնք կը կոչուին Թոսքեր ի բնէ արդէն աւելի խաղաղ քան հիւսիսային իրենց ազգակիցները՝ ծանօթ Կէկ կամ Կարմիր ալպանացիք անունով, շնորհիւ Իտալիա ապաստանած գաղութներու հետ իրենց շփումներուն, սկսան սիրել արհեստները և հողագործութիւնը, մինչդեռ հիւսիսի մէջ կարմիրները կը շարունակէին իրենց թափառական կեանքը իբրև խաշնարած և որսորդ։

Այնուհետև ալ ալպանացիները շարունակ ունեցան ընդհարումներ թիւրքերուն հետ և յաճախ շատ դղրդալի (Ճքոտրա 1477, 1770)։ Իսկ 19-րդ դարու ընթացքին կը հմտրին մօտ տասը ալպանական ապըս-

տամբութիւններ (գլխաւորաբար 1835-ին, 1836-ին, 1839-ին, 1840-ին, 1847-ին, 1854-ին, 1866-ին, 1879-ին)։ Բայց այդ բոլորը պատմաբանի աչքին չեն կարող ներկայանալ դժբախտաբար իբր իր ազատութեան տենչացող ժողովուրդի մը պայքարները, տարած ըլլալով վերին աստիճանի նեղ ոգւով և ընդմիշտ խաթարած՝ միջցեղային անվերջանալի ու արիւնաթոյր ընդհարումներով։ Անթիւ են պատերազմները Կէկերու և Թօսքերու ու այդ երկու մեծ թեւերուն պատկանող զանազան ընտանիքներու միջև։

Եւ թիւրքը շուտով գիտցաւ օգտուիլ այդ ռազմապաշտ ժողովուրդին անհամբերաշխ ու նախնական բարքերէն և դարձուց անմիջապէս առնուութիւնները իր կայսրութեան արևմտեան սահմաններու քիւրդերը։ Սկսեալ 18-րդ դարէն Պոլսոյ սուլթանները մէկ կողմէ ամեն հնարաւոր միջոց ի գործ դրին, որպէս զի չծնի ալպանական մշակոյթ մը, որ կրնար վտանգաւոր նախաշաւիղը ըլլալ ալպանական ազգային միութեան մը իր բոլոր անհաշուելի հետևանքներով և միւս կողմէ շահագործեցին ալպանական բնածին ռազմասիրութիւնը՝ անվերջ սարսափի տակ պահելու համար կասկածելի յոյները, սև լեռնցին, սերբը և բուլգարը...

Իրենց Մեծ Մտահոգութիւնն էր որ շարունակ կը հալածէր զիրենք...

Ալպանացիները գործածուեցան Հելլէններու յեղափոխութեան ատեն և եղան շատ վայրագ. Մարկ Բօցարիսը զոհ է եղած ալպան վոհմերու։ Անոնք (Մէհմէտ Ալի) մղեցան եգիպտական ապստամբութեան դէմ ու թափել տին շատ արիւն։ Անոնք եղան տևական մահասփիւռ պատուհասը սերպերուն, մակեդոնացիներուն ու բուլգարներուն...

Ելիր, շուտ, ելի՛ր, մայրի՛կ
Փախինք երթանք
Ահա կարաւ Ֆէյզին կուգայ
Չորս հազար ռազմիկներով
Իր սոսկալի ռազմիկներով
Իր կատաղի առնաւոտներով...

Կ'ըսէ մանկամարդ բուլգարուհին իր մօր, ժողովրդական երգի մը մէջ...

Մեր երկիրներու քիւրդին թողած սարսա՜փը...

Աբդիւլ Համիտ իբրև անհաւասարելի վարպետ ոճրի ու արեան, կատարելութեան հասցուց շահագործումի այդ սիստեմը։ Եւ իր նախորդներէն աւելի նախանձախնդիր ու զգոյշ Ալպանիոյ սարերը գիտութեան շղթերէն անազատ պահելու մասին, մէկ կողմէ արգիլեց անոնց ունենալ վարժարաններ ու միւս կողմէ լեցուց իր արքունիքը, Եըլդըզը, ալպաններով և անոնց հաւատարմութեան յանձնեց իր անձին պաշտպանութիւնը, փոխան լիառատ վարձատրութիւններու ու առանձնաշնորհումներու։

Կարմիր-Սուլթանին օրով ալպանացիները ձեռք բերին տեսակ մը կիսանկախ կեանք, գրեթէ ինքնավար, զերծ զինուորական ծառայութենէ և կանոնաւոր հարկատուութենէ, ու իրաւունք ստացան ապրելու իրենց նահապետական ըմբռնումներու և աւանդական սովորոյթներու համեմատ, այն միակ պայմանով՝ որ անոնք պիտի մնային տգետ։ 1879-ին Տուլչինիոյ և Անթիվարիի Սև-Լերան միացեալուն դէմ բողոքելու մտքով Պոլսոյ մէջ գումարուած ալպանական համաժողովը թէև ներշնչուած Աբդիւլ Համիտի գործակալներէն դատապարտուեցաւ մահուան նոյն ինքն Աբդիւլ Համիտի ձեռքով երբ երազեց զբաղիլ նաև ալպանական մշակութական հոգսերով...

Այդպիսով է որ 1908-ի յեղափոխութիւնը և անոր յաջորդող սահմանադրութիւնը այդ ցաւալիօրէն միամիտ ժողովուրդին կողմէ ընդունուեցան ոչ միայն սառն վերաբերմունքով, այլ մինչև անգամ հակակրութեամբ...

Բացարձակապէս անհիմն են այն զրոյցները, որոնց համեմատ իբրև թէ ալպանացիները լուրջ դեր խաղացած ըլլան 1908-ի սահմանադրութեան հռչակման գործին մէջ։ Փաստերը պատմականօրէն ճշտուած, գոյութիւն ունին այսօր, ճիշտ հակառակը ապացուցանող, և ասի է արդէն միակ տրամաբանականը և բացատրելին...

Հարկաւ կարելի էր շուտով այդ հակակրութիւնը ցրուել և „թիւրիմացութեան զոհ" ալպանացիներուն սիրցնել հաւասարութիւնը, տալով անոնց միջոցներ դրականօրէն, շօշափելիօրէն հաստատելու, որ սահմանադրական կարգերը անհամեմատ աւելի բարձր են ու լայն քան բռնապետութեան մը տուած բոլոր ազատութիւնները... Բայց Նոր-Թիւրքիոյ ղեկավարները չուզեցին, չկրցա՜ն ընել այդ։

Մինչդեռ կը շարունակէր ալպանացին մնալ տգետ և աղքատ, ու առայժիլ մտաւորապէս թէ անտեսապէս նախնական իր կենցաղին մէջ, Երիտասարդ-Թիւրքերը դրին անոր առջև Սահմանադրութեան մատեանը բացուած պարտաւորութիւններու էջին վրայ...

Իսկ իրաւունքներու մասին խօսք պիտի չըլլար։

Մենք հաւատացած ենք, որ զինուորական ծառայութեան ու կանոնաւոր հարկատուութեան ստիպումները իբրև նորահռչակ սահմանադրութեան պահանջներ ալպանացիներու առջև դրելուն հետ միաժամանակ եթէ սկսէին հանրային շինութեանց բարիքներն ալ թափիլ անոնց գիւղերուն շուրջը և ազգային ինքնուրոյն զարգացման մը դիւրութիւններ ընծայէին ալպան նորաբողբոջ մտաւորականութեան, Ալպանիան 1910-ին չէր վերադառնար Սկանդար Բէկի ու Պուչաթլլի արիւնալի տրամադրութիւններուն։

Երիտասարդ-Թիւրքերը շարունակելով իրենց նախահայրերու Մեծ Մտահոգութիւնը ոչնչէն ազգ մը կերտելու մասին, անոնց նման շարունակեցին միայն մթագնել մթնոլորտը... Անոնք տուին ալպանական մանուկ մշակոյթին մեծագոյն հարուածը այժմ արդէն պատմա-

կան դանձած պայքարով մը, որ կը կոչուի — ալպան տառերու խնդիր։

Ալպանները մինչև 19-րդ դարու կէսերը զուրկ մնացած էին գրականութենէ։ Այն հազուադէպ պարագաներուն, յորում պէտքը զգային անոնք իրենց մէկ միտքը թուղթին յանձնելու կը դիմէին յոյն կամ լատինական տառերուն։ 1866-ին հրատարակուեցաւ առաջին ալպաներէն այբբենարանը Կէկերուն ձեռքով, և լատինական տառերու հիման վրայ, որոշ փոփոխութիւններով։ 1879-ին Պոլիս գումարուած ալպանական համաժողովը վաւերացուց այդ այբուբէնը որ սակայն մատնուեցաւ անգործութեան, շնորհիւ Եըլդըզի ձեռք առած միջոցներուն և անգամ մըն ալ դուրս եկաւ պատմութեան փոշիներուն տակէն ճիշտ 30 տարի յետոյ միայն, 1909-ին Էլպասանի ալպանական համաժողովին մէջ, ուր նոր բարեփոխումներով վերջնապէս ընդունելով հաստատեցաւ իբրև ալպան ազգային այբուբէն և որոշուեցաւ որ ծառայէ այնուհետև ալպանացի մանուկներու նախնական կրթութեան։

Այս հարուածը շատ ուժեղ թուեցաւ իրենց կեդրոնաձիգ աշխարհահայեացքովը կուրացած թիւրք պետական վարիչներուն և անոնք փութացին փակել, առանց այլևայլի, թէ՛ ալպանական տպարանները, թէ՛ նորահաստատ ալպանական ազգային վարժարանները ու հալածանքը ալպանական մտքի բոլոր փորձերուն դէմ դարձաւ խելակն, անզուսպ...

Այդպիսով խաւարը շարունակեց տիրել Ալպանիոյ կիրճերուն մէջ այնքան, որ մինչև այժմ ալպան ժողովուրդի մօտ մէկ ու կէս միլիոն անդամներուն չնչին, գրեթէ մէկ հարիւրերորդ մասը միայն գիտնայ թերևս կարդալ գրել։ Իտալական և աւստրիական ֆոնդերով սնուող վարժարաններն ալ չկրցան այդ ուղղութեամբ կատարելագործ արդիւնաւոր աշխատանք, ըլլալով աւելի շուտ քաղաքական մեքենայութեանց վառարան, քան դաստիարակութեան բոյներ։

Պալքանեան պատերազմի բռնկումովը Ալպանիան սատցաւ առիթ սեփական ազգային պահանջներ ձևաւորելու՝ հիմնուած գլխաւորաբար ազգերու իրաւանց,— *droits des nationalités*,— և „Պալքանները բալքանեան ժողովուրդներուն“ զոյգ սկզբունքներուն վրայ, զորս պաշտպանակից պետութիւնները ընդ առաջ նետեցին իրենց սուրերը հասարակաց թշնամիին դէմ մերկացուցած ժամանակ։

Այն պարագան սակայն, ըստ որում Հռոմ և մանաւանդ Վիէննա կը թիւն աւելի շահագրգռուած ըլլալ ալպանացւոց ազգային իրաւունքներով, քան նոյն ինքն ալպան ժողովրդական խաւերը, չատ արդարացի երկիւղ կը ներշնչէ մեզ՝ բոլոր ազգերու ազատագրութեան անկեղծ բարեկամներուս, որ մի գուցէ ամբողջ գործը սահմանափակի դերակատարներու փոփոխութեան մէջ, որ Եըլդըզին կամ Երիտասարդ-Թիւրքին յաջորդէ Բալպլացը կամ կոնսուլդան և ալպան ժողովուրդը շարունակէ ըլլալ զոհը իր տգիտութեան ու արիւնատենչ բնազդներուն, յաւիտենական գործիքը օտար ագահ շահերուն և բոյնը բոլոր անմիտ երկպառակութեանց։

Ալպանիոյ ազատագրումը կրնայ ըլլալ իրական և նկատելի իսկապէս նոր մէկ պարտութիւնը Օսմանի զաւակներու ստեղծած քաօսին միայն այն պարագային, երբ անոր քաղաքական ճակատագրին հետ խաղացող իր զաւակները գիտնան միանգամ ընդմիշտ ձերբազատիլ սին եսամոլ նպատակներու հետապնդութենէն ու շահախնդիր խնամակալութիւններու կապանքներէն և հասկանան որ ալպան ժողովրդին ինչպէս ոևէ ժողովրդի համար գոյութեան իրաւունքի անսասան սիւները կը կազմեն ամենէն առաջ ազգային ընդհանուր շահերու գիտակցութիւնը և անդադրում խնամուած մշակոյթը։

Բ. ՇԱՀՊԱԶ

Ա Զ Դ

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

„Դրօշակ“ի 1913 տարւայ առաջին թիւը ուղարկելու առթիւ՝ կը յիշեցնենք մեր գործակալ ընկերներուն և անհատ բաժանորդներուն.

1) Գործակալները պէտք է յայտնեն, թէ քանի՞ օրինակ ղրկուելու է իրենց շրջանին համար։

2) Անհատ բաժանորդները պէտք է շուտով նորոգեն իրենց բաժանորդագրութիւնը, հակառակ պարագային կ'ըստիպուինք դադրեցնել թերթի առաքումը։

3) Հասցէները գրել որոշ և ընթեռնելի։ Հասցէի փոփոխութիւնը առանց վճարի է։

4) Տարեկան բաժնեգինն է 5 ֆրանկ կանխիկ։

Հասցէ՝ *Réd. du „DROSCHAK“, Genève (Suisse)*

„POUR LES PEUPLES D'ORIENT“

Organe des Revendication Arméniennes

Paraissant le 10 et le 25 de chaque mois

Directeurs:

Francis de Pressensé et Victor Bérard.

Secrétaire de la Rédaction:

Jean Longuet

Abonnements: 10 frs.

„Pour les Peuples d'Orient“ սկսած է հրատարակուել ամիսը երկու անգամ, ֆրանսերէն և անգլիերէն բաժիններով։

Հասցէ՝ *31, Villa d'Alesia (III-ter, rue d'Alesia)*

Paris, XIV.